Azg Ազգ

8 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2010 ՇԱԲԱԹ 162 (4542)

ISSN: 1829-1651

Բանաձեւերը դատարկ թուղթ են՝ մինչեւ....

ՄԱԿ-ում քննարկվելիք ադրբեջանական բանաձեւը հայ քաղաքական գործիչները վերջերս անվանել էին դատարկ թուղթ եւ անգամ տրված թղթի արժեքն իսկ չունեցող: Երեկ, անդրադառնալով այդ կարծիքներին, իրավագետ Հրայր Թովմասյանն այլ տեսանկյունից է նայել խնդրին: Ըստ նրա՝ ՄԱԿ-ում ընդունված նախկին ադրբեջանական բանաձեւերը եւս նույն ոգով են եղել, այսինքն՝ նոր բան չկա. «Բայց երբ դրանք սկսում են միմյանց հաջորդել, ապա մի օր էլ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում քննարկման առարկա կարող են դառնալ, որի որոշումներն արդեն իրավական հետեւանքի տեսանկյունից ավելի խիստ կլինեն», ասել է նա:

Օրենք որ ունենանք՝ զինված ուժերում կարգապահությունը կբարձրանա՞

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի հանձնաժողովի կազմակերպած «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» օրենքի նախագծի լսումներից ե՛ւ լրագրողները, ե՛ւ բավական լայն շրջանակ ներկայացնող հրավիրյալները սպասում էին գուցե ավելին, քան սովորական քննարկումներն էին՝ հենց միայն այն պատճառով, որ վերջին ամիսներին բանակում եղան մահվան ելքով ոչ կանոնադրական դեպքերը: Եվ դա էլ բնական էր՝ հասարակությունը պատասխաններ է ուզում այդ դեպքերի առիթով բարձրացված հարցերին: Սակայն այս օրենքի նախագիծը որոշ իմաստով բանակի ընդհանուր բարեփոխման ուղղությամբ միջազգային պարտավորությունների շրջանակում է, նաեւ՝ Հայաստանի սահմանադրությանը օրենսդրությունն ավելի համապատասխանեցնելու միտում ուներ, ուղղակի համընկել էր հասարակության ընդհանուր տրամադրությանը:

Մինչ այս Հայաստանի զինված ուժերում օրենքով սահմանված չեն եղել զինվորական կարգապահության կանոնները, կարգապահական տույժերի տեսակները, պատասխանատվության ենթարկելու կարգը. ընդամենը եղել է կառավարության որոշում՝ 1996 թվականից, ինչես հանձնաժողովի նախագահ **Հրայր Կարապետյանն** էր ասում՝ խորհրդային բանակի կանոնագրից արտագրված: Բայց կյանքի է փոխվել, երկիր է փոխվել, մինչդեռ մինչեւ հիմա բանակը մասամբ կրում է խորհրդային բարքերի կնիքը, ու բացասական երեւույթները բանակում նաեւ իրավական դաշտի բացակայությունից են գալիս:

Տես էջ 2

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Ալիեւի դժգոհության «կրակոցներն» ու մտահոգ եվրոպացիք

Զինադադարի խախտումները շարունակվում են, իսկ մեղավորի ուղղությամբ կշտամբանք չի էլ հնչում

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ադրբեջանի ներկայիս պահվածքն առավելապես հուսահատություն է հիշեցնում, դիվերսիոն ձեռնարկումներն ու հատկապես դրանց անհաջող ելքերը եւս անհուսության նման մի վիճակի վկայություն կարող են լինել, երբ ադրբեջանական իշխանության համար ամեն կերպ իրավիճակի կտրուկ փոփոխության հասնելը ընդունելի է:

Կրկին շփման գծում հնչած կրակոցներն ու ձեռնամարտը, զոհերը միջազգային հանրության մտահոգությունների առիթ տվեցին, սակայն որեւէ մեկն ավելին ասելու քաջություն կամ ցանկություն, իսկ որ քաղաքականության պարագայում առավել ճշգրիտ հնչի՝ նպատակահարմարություն չունեցավ:

Եվրոմիության անունից էլ դատապարտեցին, մտահոգվեցին, ԵԱՀԿ Մինսկի խմբի անունից էլ կոչեր ու մտահոգություն հնչեցին: Իր սրբազան պարտքն նույն համատեքստում կատարեց նաեւ ԵԱՀԿ գործող նախագահը՝ Ղազախստանի արտաքին գերատեսչության ղեկավար Կանատ Սաուդաբաեւը: Վերջինս, ըստ ԵԱՀԿ պաշտոնական տեղեկատվության, դեռեւս սեպտեմբերի 6-ին հայտարարել էր, թե «խստորեն դատապարտում է զինադադարի համաձայնագրի խախտումները, նաեւ մտահոգված լինելով երկու կողմերում էլ առկա կորուստների առնչությամբ»:

ԵԱՀԿ գործող ներկայիս նախագահի մատուցմամբ, զինադադարի յուրաքանչյուր խախտում կարող է ապակայունացնել Մինսկի խմբի գործընթացը, սահմանափակել կառուցողական երկխոսություն ձեւավորելու հնարավորությունները: Ղազախստանի արտգործնախարարն իր աջակցությունն է հայտնել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հայտարարությանը, որն «Ազգը» ներկայացրել է նախորդ համարում:

Տես էջ 3

Բուհեր ընդունվելն ասիճանաբար պետք է հեշտանա, իսկ սովորելն ու ավարտելը՝ դժվարանան

Նշեց կրթության եւ գիտության նախարարը

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ուսումնական տարվա մեկնարկին էր նվիրված երեկ կառավարությունում կրթության եւ գիտության նախարար **Արմեն Աշոտյանի** մամուլի ասուլիսը: Նախարարը նախ հայտնեց, որ այս ուսումնական տարում աշակերտների թիվը նվազել է, եւ այդ պատճառով մոտ 3 հազար ուսուցիչ կարող էին կորցնել աշխատանքը, բայց ամեն ինչ արվեց, որ դա տեղի չունենա, եւ այդ մարդիկ պահպանեցին իրենց աշխատատեղերը: Խոսելով դասագրքերի վճարների մասին, Արմեն Աշոտյանը մեկ անգամ եւս նշեց, որ տարրական օղակի դասագրքերը պետության կողմից տրվում են անվճար:



Տես էջ 2

Նախ՝ Ղարաբա՞ղ, թե՞ Երեւան

Ադրբեջան կատարած այցի արդյունքները ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն, ըստ ադրբեջանական լրատվամիջոցների, ամփոփելու են մամուլի ասուլիսով: Այդ մասին հայտարարել է ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասիեն: Սակայն նա չի հայտնել, թե Բաքվից հետո Ղարաբա՞ղ են մեկնելու, թե՞ Երեւան՝ նշելով, որ դա կախված է մի շարք գործոններից, այդ թվում՝ եղանակից:

ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալը Ադրբեջանում

ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Թինա Քեյդենաուն այսօր ժամանում է Ադրբեջան: Նախատեսված են բանակցություններ Ադրբեջանի բարձր պաշտոնյաների հետ: Մեդվեդեւի՝ Ադրբեջան այցից հետո գուցե ԱՄՆ-ը հավակնում է դիրքերն հենց այսպես, բայց Հայաստան Քեյդենաուն եկել էր Մեդվեդեւից շատ առաջ:

Նորից օտարալեզու դպրոցների փաթեթի հարցը ու նորից պիկետ

Օտարալեզու դպրոցների վերաբերյալ օրենսդրական փաթեթը Ազգային ժողովի սեպտեմբերի 14-ի քառօրյայում ընդգրկելու հարցն այսօր կքննարկվի ԱԺ գիտության, կրթության եւ մշակույթի հանձնաժողովում: Այս փաթեթին դեմ, եթե հիշում եք, քաղաքացիական շարժում էր ստեղծվել, եւ այս շարժումը ճնշած չէ ու այսօր նիստին զուգահեռ պիկետ է անցկացնելու ԱԺ Դեմիրճյան փողոցի մուտքի մոտ:

40-րդ հարկից ընկած նյույորքցին ողջ է մնացել

Կյանքից հիասթափված նյույորքցիներից մեկը 40-հարկանի շենքի տանիքից ցատկելով՝ ընկել է կայանված ավտոմեքենայի վրա:

Ոստիկանությունում Gothamist կայքի թղթակցին պատմել են, որ 22-ամյա Թոմաս Մագիլը վայր է նետվել Ուեսթ Էնդ պողոտայի մի երկնաքերից: Երիտասարդը անձնասպանության փորձի նախօրեին Facebook-ի իր էջում գրել էր այդ մտադրության մասին: Սակայն, 122 մետր ընկնելով ժամում մոտ 200 կմ արագությամբ, Մագիլը հայտնվել էր ճանապարհին կայանված Dodge Charger մարդատար ավտոմեքենայի վրա: Ճզմելով դրա տանիքը եւ փշրելով հետեւի ապակին՝ նա հայտնվել էր ներսում եւ դրա շնորհիվ ողջ էր մնացել:

Ականատեսները պատմում են, որ ընկնելուց հետո Մագիլը չի կորցրել գիտակցությունը: Մեքենայի միջից նա բղավում էր՝ ո՛չfu, ո՛չfu: Ոստքերի կոտրվածքներով եւ այլ վնասվածքներով նրան տեղափոխել են հիվանդանոց:

Հակահայկական դիրքորոշումը հիմար վիճակի մեջ է դրել շվեդ խորհրդարանականին

Հայաստանի հարցով Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում համազեկուցող Գորան Լինդբլադն իր տարօրինակություններով ու հակահայկական դրսեւորումներով թերեւս պետք է ուշադրության արժանանա նույն ԵԽԽՎ-ի կողմից, որպեսզի նրան չվստահվեն Հայաստանին առնչվող հարցեր այն դեպքում, երբ վերջինս ուղղակի հակահայկական կեցվածք ու գործելակերպ է որդեգրել:

Այս հանգամանքի հերթական ապացույցը տրամադրել է Շվեդիայի հայկական ասոցիացիաների միությունը, որի երեկվա հաղորդագրության համաձայն, Լինդբլադը ոչ միայն հակահայկական դիրքորոշում ունի Խորհրդարանական վեհաժողովում, այլեւ նույն գործելակերպով է «առանձնանում» հենց Շվեդիայում: Խնդիրն այն է, որ Լինդբլադը Շվեդիայում սպասվող խորհրդարանական ընտրությունների համատեքստում անդրադառնալով Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւին՝ հանդես էր եկել հայտարարությամբ, թե Շվեդիայում ձախ ուժերի հաղթանակի պարագայում այս հարցը կհասցվի մինչեւ Եվրոմիություն եւ Միացյալ ազգերի կազմակերպություն:

Քանի որ հենց այդ ուժերն են Շվեդիայում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը բարձրացողները, եւ եւս մեկ քայլ էր պատրաստվում այս հարցը շվեդական դպրոցական ծրագրում դասավանդելու մասին, Լինդբլադը կոչ է արել այդ ծրագրերին խոչընդոտելու համար քվեարկել իր կուսակցության օգտին:

Շվեդիայի հայկական ասոցիացիաների միությունը դիմել է Լինդբլադին այդ հայտարարությունը մեկնաբանելու խնդրանքով, ինչին շվեդ խորհրդարանականը պատասխանել է, թե Հայոց ցեղասպանության նման հարցերը խորհրդարանների քվեարկության թեմա չեն:

Սակայն հետաքրքրական է, որ, հաղորդագրության համաձայն, նույն Լինդբլադը Շվեդիայի խորհրդարանին երկու նոր բանաձեւեր է ներկայացրել՝ ճանաչելու «1932-33թթ. Ուկրաինայում իրականացված ցեղասպանությունը» եւ հրադադարակելու Եվրոպայի խորհրդի անդամ այն երկրների առնչությամբ հայտարարություն, որնք «իրենց զինված բախումներ են թույլ տալիս, մասնավորապես Հայաստանն ու Ադրբեջանը»: Ըստ Լինդբլադի, զինված բոլոր բախումները պետք է դադարեցվեն, «իսկ տարածքային ամբողջականության առումով բոլոր զինված ուժերը պետք է տեղակայվեն իրենց իսկ սահմաններից ներս, վերադառնան փախստականները եւ այլն»:

Շվեդ խորհրդարանականը Շվեդիայի քաղաքացի հայերի ուղարկած հարցերին չի բարեհաճել պատասխանել, շատ կարճ արձագանքել է Ուկրաինայում ցեղասպանության մասին բանաձեւի նախագծին՝ խայտառակելով ինքն իրեն, թե այդ բանաձեւը ներկայացվել է «որպես պրովոկացիա եւ տեսակետի ապացույց»:

Թերեւս նույն Շվեդիայի քաղաքացիները մինչեւ քվեարկությունը լավ կլիներ անհրաժեշտ ուշադրություն հատկացնեին հենց Լինդբլադի վերջին հայտարարությանը, քանի որ նա նախընտրում է Շվեդիայի հարկատուների փողերով սադրանքներով զբաղվել սեփական խորհրդարանում, իսկ ԵԽԽՎ մակարդակով էլ շվեդական ժողովրդավարությունից մասն իսկ չունեցող գործունեությամբ բարդացնել առանց այդ էլ մի բարվոք վիճակում չգտնվող հարաբերությունները Հայաստան-Ադրբեջան բոլոր տիրույթներում:

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Տավուշում զոհված զինծառայողի մայրը բաց նամակ է հղել պաշտպանության նախարարին

Տավուշի զորամասում հուլիսի 27-ին մահացած պայմանագրային զինծառայող Արսակ Նազարյանի մայրը՝ Հասմիկ Հովհաննիսյանը, բաց նամակ է հղել Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին՝ պնդելով, որ իր որդին ինքնասպան լինել չէր կարող, ինչպես պաշտոնական վարկածով է ներկայացվում, նշելով, որ նա հավատում էր Աստծուն եւ հսկայ գիտեր, որ ինքնասպանությունը մեղք է: «Իմ որդուն սպանել են: Սպանել են մտածված, սառնասրտորեն, հաշվարկով: Վերացրել են իրենց ճանապարհին խանգարող լույսը, բարին ու ազնիվը: Այդպիսի գազանները չարիք են եւ ծնունդ են անպատժելիության մթնոլորտի: Նրանք սովորական մարդասպաններ չեն, նրանք հայրենիքի դավաճաններ են, որոնք սահմանի վրա գազանաբար սպանում եւ ոչնչացնում են սահմանապահ սպային», գրել է մահացած զինվորի մայրը: Նա շարադրել է իր ենթադրությունները՝ նկատելով, թե նրանք, ովքեր հենց սկզբից սպանությունը ինքնասպանության fողի տակ են ուզում անցկացնել՝ «միտումնավոր փաստերն աղավաղելով, իբր թե հանուն հայկական բանակի պատվի գործը fշում են առաջ, նրանք եւս ազգի եւ հայրենիքի դավաճաններ են եւ դրանով ավելի են գցում բանակի պատիվը՝ արյան ու խայտառակության խարան դնելով բանակի ու նրա ղեկավարության ճակատին: Արյունն ու խայտառակությունը մաքրելու միակ ճանապարհը արդար քննություն անցկացնելն է, որը հենց սկզբից ընթանում է ահավոր թերություններով»: Հ. Հովհաննիսյանը նշում է, իր կարծիքով, նախաքննության խախտումները՝ մատնահետքեր չեն վերցվել մահացած սպայի մարմնից, աշխատել են առանց ձեռնոցների, տունը, ուր աղրել է՝ չի կնքվել, խուզարկության ժամանակ չի հայտնաբերվել սպայի օրագիրը, առգրավված իրերի մասին ոչինչ չի ասվել, մարմինը մերկ են ուղարկել Երեւան՝ չկա համազգեստը, որի վրա բազմաթիվ հետքեր կլինեին. ըստ սպայի մոր՝ մարմնի ահավոր վերքերը վկայել են, որ սպանությունը ոչ թե հուլիսի 27-ին, այլ ավելի վաղ՝ հուլիսի 24-ի լույս 25-ի գիշերն է եղել, եւ մորը տանջում է այն հարցը, թե որտեղ է դրված եղել որդու մարմինը:

Վշտահար մայրը նամակում ծանր խոսքեր է ուղղել պաշտպանության նախարարին՝ պահանջելով. «...բոլորին կանգնեցնում եք դատարանի առջեւ եւ ոչ թե որպես սովորական մարդասպանների, այլ որպես հայրենիքի դավաճանների, որոնց համար բացի իրենց փորից ուրիշ արբություն չկա: Հայրենիքի դավաճաններին պատերազմական իրավիճակում գնդակահարում էին»:

Հասկանալի են որդեկորույս մոր մեղադրանքները եւ արդար դատաքննության պահանջը, որն, ի դեպ, ավելի շատ մեր բանակին է պետք. մեղավորների լիարժեք ցուցակի պատասխանատվության ենթարկումը կմաքրի բանակի անունը նրան ուղղվող բազմաթիվ պարսավանքներից:

Մ. Խ.

Օրենք որ ունենանք՝ զինված ուժերում կարգապահությունը կբարձրանա՞

1-ին էջից

Ցնցած նա մեր բանակում տիրող բարքերի վերաբերյալ լրագրողների հարցին պատասխանելիս նկատեց, թե ամեն ինչ համեմատության մեջ է. իհարկե, մեր բանակը զերծ չէ թերություններից, բայց մեր բանակը, եթե համեմատենք հարեւան երկրի բանակի հետ՝ բազմիցս ավելի մարտունակ է, բարոյական վիճակն ավելի կայուն է, իսկ ամենակարեւորը՝ այսօրվա քաղաքականությունը բանակի վերաբերյալ տանում է դեպի բարեփոխումներ, իրավական դաշտի ապահովում, ավելի կատարելագործված եւ հզոր բանակի ճանապարհով:

Վերադառնալով օրենքի նախագծին՝ նրա եւ պաշտպանության փոխնախարար Արա Նազարյանի ներկայացմամբ՝ պաշտպանության նախարարության ներկայացված նոր նախագիծը կարեւորվում է եւ հատկանշական է նրանով, որ զինված ուժերում բոլոր հարաբերությունները բերվում են օրենսդրական տեսքի, սահմանվում են հրամանատարների եւ սպաների, առհասարակ՝ զինծառայողների պարտականությունները ու լիազորությունները, նրանց փոխհարաբերությունները: Օրենքում նաեւ ամրագրված են զինվորական կարգապահություն հասկացությունն ու դրա ապահովման սկզբունքները:

Ամրագրված են կարգապահական իրավունքի սահմանումը, խրախուսանքի կարգը, տեսակները, ինչպես նաեւ կարգապահական խախտման դեպքում՝ զինծառայողներին տրվող տույժերի տեսակները, դրանք կիրառելու եւ հանելու կարգը: Օրենքում նկարագրվում են զինծառայողների հրամաններ տալու սահմանափակումները այն դեպքերում, երբ հրամանատարները գերազանցում են իրենց լիազորությունները: Տրված է, թե բողոքի զեկուցագիրը ինչպե՞ս է ներկայացվում, ինչպե՞ս վիճարկել հրամանատարի հրամանները, պատիժները եւ այլն: Ցնցած նախագիծը մի անգամ լրամշակվել է, բայց էլի դրա կարիքը կար՝ այնուամենայնիվ հսկայ սահմանված չէին հրամանատարական բարձրագույն կազմի լիազորությունների, պարտականությունների եւ իրավասությունների շատ պահեր, օրինակ՝ բողոքարկման կարգը: Բողոքարկման ձեւը դատարան դիմելն է, բայց չէր նշված՝ հրամանատարը կազատի՞ զինծառայողին դատարան հայց ներկայացնելու համար, թե՞ ոչ, արձակուրդ կտա՞, այս ամենը պետք է դեռ հսկայ սահմանել:

Իրավապաշտպան Արթուր Սաֆունցը, ՀԿ սեկտորը ներկայացնող Արման Սիմոնյանը իրենց հարցմտահոգություններով խոսեցին զինվորական օմբուդսմենի ինստիտուտի անհրաժեշտության, կարգապահական մեկուսարանների վերացման պարագայում (որը ողջունելի էր համարվում)՝ հետագա ընթացակարգի հսկայ ձեւակերպման բացակայության, ձերբակալված զինծառայողների պահման վայրի հսկայ մասնաշնման բացակայության վրա:

Ի դեպ, պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը եւ ԵԱՀԿ դեսպան Սերգեյ Կապինոսը դիմել են ԱԺ պաշտպանության, ներքին գործերի եւ ազգային անվտանգության հանձնաժողովին, որ օրենքի քննարկման որեւէ փուլում նախագիծն ուղղարկվի փորձաքննության Վենետիկի հանձնաժողով: Այդ խնդիրը կվճռվի սեպտեմբերի 9-ի հանձնաժողովի նիստում:

Լրագրողները քննարկմանը ներկա ԱԺ փոխնախագահ Սամվել Նիկոյանից հետաքրքրվեցին՝ «Օրենքի ընդունումով իրավիճակը կշտկվի՞»: Ըստ Նիկոյանի՝ ձեռքբերում է, որ խնդիրը բերվում է օրենսդրական դաշտ, օրենքով սահմանվում են զինված ուժերում բոլոր փոխհարաբերությունները, բայց պատկերացնել, որ այս մի օրենքով հարյուր տոկոսով հարցերը կլուծվեն՝ սխալ է, որովհետեւ սրան զուգահեռ բազմաթիվ կրթադաստիարակչական միջոցառումներ են պետք՝ հոգեբանական բարոյական վիճակի բարելավման ուղղությամբ, համալիր բարեփոխումներ: Իսկ այս նախաձեռնությունը քայլերից մեկն է, որ կուռ բանակ ունենանք: Իսկ մահվան ելքով ոչ կանոնադրական միջադեպերի վերաբերյալ էլ ասաց, թե չէր ուզենա սխալվել գնահատականներում, տեղեկություններ եղել են, ըստ որոնց հոգեկան ոչ հավասարակշիռ մարդուն զորակոչել են բանակ. գնում է նախքննություն, ճիշտ պատասխանը դատական մարմինները կարող են տալ:

Ադրբեջանահայության նամակը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային

«Իրավիճակը Ադրբեջանի օկուպացված տարածքներում» անվանյալ ադրբեջանական բանաձեւը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում քննարկվելու է սեպտեմբերի 9-ին: Ադրբեջանահայերի ներկայացուցիչների համաժողովի կազմկոմիտեն նամակ է հղել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային, ուր նշում է, թե բանաձեւում բառ անգամ չկա ադրբեջանահայության մասին, մինչդեռ բանաձեւը հենց իրենց ճակատագրին է վերաբերում: Նամակում անդրադարձ կա, որ 1988 թվականին Հայաստանի հետ միավորվելու ԼՂ պետական կառույցների որոշման հետեւանքով բռնություններ սկսվեցին նաեւ ադրբեջանահայերի նկատմամբ, ովքեր Բաքվում, Սումգայիթում, Կիրովաբադում եւ Ադրբեջանի այլ բնակավայրերում դաժան հալածանքների, սպանությունների եւ տեղահանության թիրախը դարձան միայն հայ լինելու պատճառով. «Երբ լսեցինք ՄԱԿ-ում Ադրբեջանի օկուպացված տարածքների հարցի լսումների մասին, մի պահ թվաց, թե սառույցը վերջապես տեղից շարժվել է: Որ ի վերջո կխոսվի Բաքվի Արմենիֆենդի եւ Գյանջայի հայկական թաղամասերի, Ադրբեջանի՝ տասնյակ եւ հարյուրավոր հայկական բնակավայրերի մասին, որտեղից բնիկ ժողովուրդն ուժով քշվել է ջարդարար խուժանի եւ նրանց հետ ուս ուսի գործող ոստիկանության ու բանակի ստորաբաժանումների կողմից: Ահա սրանք են, իրոք, օկուպացված տարածքներ եւ ոչ թե պատերազմի հետեւանքով ամայացած, անմարդաբնակ դարձած, ավերված մի քանի շրջաններ, որ այս բովանդակ աշխարհում ադրբեջանահայությանը մնացած միակ քիչ թե շատ օրինական հողակտորն էր:

Եվ այսօր առաջ է քաշված այս ողջ անօրենությունները ՄԱԿ-ի կողմից վավերացվելու հարցը: Եթե նրանց ձեռնարկը այս անգամ եւս հաջողությամբ պսակվի, մենք այլեւս ասելու մեկ բան ունենք: Այս «իրատեսական» քաղաքականության դասերը, որ ավելի քան երկու տասնամյակ մատուցվում են ադրբեջանահայությանը, մեզ պարտադրում են դառնալ գործոն: Այս գործընթացի հեղինակներին եւ հովանավորներին ուզում ենք ասել, որ ընդունվող փաստաթուղթը լինելու է ավելորդ եւ անարդյունք: ՄԱԿ-ից պահանջում ենք վերականգնել մեր՝ անօրինաբար տեղահանված ադրբեջանահայերի բոլոր ոտնահարված իրավունքները համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության եւ հիմնարար կոնվենցիաների»,- ասված է նամակում:

Վարազ Սամուելյանի կտակով մշակույթի տուն Արթիկում

Արթիկում երեկ բացվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի կառուցած մշակույթի տունը, որն իրականություն է դարձել անվանի քանդակագործ եւ նկարիչ Վարազ Սամուելյանի կտակի համաձայն: Ամերիկահայ արվեստագետ Վ. Սամուելյանը ծնունդով Երեւանից է, Ցեղասպանությունը վերապրածների որդի, ԱՄՆ է տեղափոխվել 1946 թվականին, որտեղ էլ հայտնի դարձել որպես նկարիչ ու քանդակագործ: Հայտնի է նրա բրոնզաձույլ «Սասունցի Դավիթը» Ֆրեզնոյում, որն ամերիկահայերի սիրելի ստեղծագործություններից է:

Նորակառույց մշակույթի տան բացմանը ներկա էր վարչապետ Տիգրան Սարգսյանը:

ԳԱԱ-ի մասին օրենք

ԱԺ կրթության, գիտության, մշակույթի հարցերի հանձնաժողովի նախագահ Արսակ Դավթյանն «Ազգին» հայտնեց, որ հանձնաժողովի այսօրվա նիստում քննարկվելու է ԳԱԱ-ի մասին օրենքի նախագիծ: Մինչեւ այժմ այդպիսի օրենք չկար՝ «Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի երկու հոդվածներով էր ակադեմիական գիտության ոլորտը կանոնակարգվում:

Մ. Խ.

Բուհեր ընդունվելն ասիճանաբար պետք է հեշտանա, իսկ սովորելն ու ավարտելը՝ դժվարանան

1-ին էջից

Ավագ դպրոցի եւ հետբուհական համակարգի մասին կրթության եւ գիտության նախարարն ասաց, որ շուտով Ազգային Ժողովի քննարկմանը կներկայացվեն բուհական կրթության օրենքի փոփոխությունները, որոնցից հիմնականն այն է, որ 2011-ին ավարտական բոլոր քննությունները կդառնան միասնական: «Բուհեր ընդունվելն ասիճանաբար պետք է ավելի հեշտ դառնա, իսկ սովորելն ու ավարտելը՝ շատ-շատ դժվար», ընդգծեց Արմեն Աշոտյանը: Նա նաեւ տեղեկացրեց, որ եւս 40-44 ավագ դպրոցներ կմիանան ներկայումս ստեղծված 91 ավագ դպրոցներին:

Այս տարի Հայաստանը չի ունենա ավարտական դասարաններ, եւ էքստեռն կարգով դպրոց ավարտողներ էլ չեն լինի: Ինչ վերաբերում է տարրական օղակին, ապա այստեղ էլ չպետք է լինեն 6 տարեկանը չլրացած աշակերտներ: Նախարարը խոսացավ, որ այս կարգերը խախտող տնօրենները կհեռացվեն աշխատանքից: Նա նաեւ խոսացավ, որ այս տարի կադրային փոփոխություններ կլինեն հատուկ դպրոցներում:

Կասեցված մասնավոր բուհերի 2200 ուսանողներից միայն 100-ն են դիմել նախարարությանը այլ բուհերում ուսումը շարունակելու համար, եւս 100-ն էլ դիմել են այլ բուհերին: Այս տվյալները բերելով՝ Արմեն Աշոտյանն այն կարծիքը հայտնեց, որ կասեցված բուհերում ուսանողների առնվազն կեսից ավելին ձեւական են եղել, եւ այնտեղ պարզապես չկար կրթական գործընթաց: Նա նաեւ տեղեկացրեց, որ յուրաքանչյուր վեց ամիսը մեկ դեռեւս մնացած 47 մասնավոր բուհերում ստուգումները կշարունակվեն, եւ եթե նրանցում լինեն շեղումներ տրամադրված լիցենզիաների պահանջներից, ապա դրանց գործունեությանը եւս կկասեցվի:

Դիլիջանի միջազգային դպրոցի հոգաբարձուների հայտարարության մասին տրված հարցին պատասխանելով՝ կրթության եւ գիտության նախարարն ասաց, որ այդ դպրոցի ստեղծումը առնչություն չունի օրենքում կատարված փոփոխություններին, եւ հույս հայտնեց, որ այդ նախագիծն ի վերջո իրականություն կդառնա:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

Անցուդարձ

«Գնենք հայրենականը»

Փառատոն՝ ուղղված թեթեւ արդյունաբերության զարգացմանը

Սեպտեմբերի 18-19-ին Երեւանի Բուսաբանական այգում կայանալու է «Գնենք հայրենականը» խորագրով փառատոն-ցուցահանդես-վաճառք: Փառատոնի գլխավոր ուղղվածությունը թեթեւ արդյունաբերության ոլորտն է: Հայաստանում թեթեւ արդյունաբերությունը բազմաթիվ խնդիրներ ունի, եւ դրանց հաղթահարումը պահանջում է պետության ու մասնավոր հատվածի համատեղ աշխատանք: Կառավարության ուշադրությունը թեթեւ արդյունաբերության ոլորտի հիմնախնդիրների վրա սեւեռելը փառատոնների ծրագիրը կառավարության հավանությանն արժանացավ այս տարվա աորիլին: Էկոնոմիկայի նախարարության արդյունաբերության վարչության պետ **Հայկ Միրզոյանի** խոսքով՝ նախարարությունը, կարեւորելով թեթեւ արդյունաբերության ոլորտի զարգացումը, դեռ 2009-ին բանակցություններ է վարել միջազգային տարբեր կառույցների հետ Հայաստանում դիզայնի դպրոց հիմնելու նպատակով: «Շատ կարեւոր է, որ թեթեւ արդյունաբերության ընկերություններն ունենան իրենց արտադրանքները: Արդեն պայմանավորվածություն ունենք Իտալիայում «Եվրոպայի դիզայնի ինստիտուտի» հետ», տեղեկացրեց Հայկ Միրզոյանը: Ամեն ինչ արվում է, որ այս տարվանից Գյումրիում մեկնարկեն «Եվրոպայի դիզայնի ինստիտուտի» դասընթացները: Անդրադառնալով «Գնենք հայրենականը» փառատոնին՝ Հայկ Միրզոյանն ընկերություններին կոչ արեց մասնակցելու այս միջոցառմանը:

Փառատոնի շրջանակներում կազմակերպվելու է ցուցահանդես-վաճառք, «Ոլորտի մասնագետներին խնդրել ենք ցուցահանդեսի նպատակներից մեկն է: Նմանատիպ փառատոնը անշուշտ կնպաստի հայրենական արտադրողի վարկանիշի բարձրացմանը, նաեւ գործարարների ու հասարակության միջեւ բարենպաստ մթնոլորտի ձեւավորմանը: Այս 2 օրերի ընթացքում հանրությանը հնարավորություն է ընձեռվում՝ ծանաչելու տեղական արտադրանքը:

Փառատոնի կազմակերպիչներն են Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների (գործատուների) միությունը եւ Գիտությունների ազգային ակադեմիայի բուսաբանության ինստիտուտը: Ցուցահանդես-վաճառքին մասնակցելու են շուրջ 2 տասնյակ ընկերություններ ու անհատներ: Չի բացառվում, որ մասնակիցների թիվը կավելանա:

«Համոզված ենք, որ թեթեւ արդյունաբերության ոլորտն ունի պոտենցիալ, եւ մեր թիրախային ներդրումները պետք է ուղղվեն նաեւ այս ոլորտին», երեկ նման համոզմունք հայտնեց Արդյունաբերողների եւ գործարարների միության նախագահ **Արսեն Ղազարյանը**: Փառատոնի շրջանակներում, բացի տեղական արտադրանքի ցուցադրությունից, լինելու են նաեւ քննարկումներ:

Փառատոն-ցուցահանդեսն ունի մշակութային բազմազան ծրագիր: Սեպտեմբերի 18-19-ին Բուսաբանական այգում հնչելու են ազգագրական երգ, հումոր, լինելու են պարային կատարումներ ու մանկական խաղերի մրցույթ: «Ունենք նաեւ սոցիալական գործընկերության խնդիր՝ աջակցելու Բուսաբանական այգու վերականգնման ու վերակառուցման աշխատանքներին», «Արմենպրեսի» մամուլի սրահում ասաց Արսեն Ղազարյանը:

Թեթեւ արդյունաբերության զարգացմանն ուղղված միջոցառումներից մեկն է: Նմանատիպ փառատոնը անշուշտ կնպաստի հայրենական արտադրողի վարկանիշի բարձրացմանը, նաեւ գործարարների ու հասարակության միջեւ բարենպաստ մթնոլորտի ձեւավորմանը: Այս 2 օրերի ընթացքում հանրությանը հնարավորություն է ընձեռվում՝ ծանաչելու տեղական արտադրանքը:

Սեպտեմբերի 18-19-ին Բուսաբանական այգում կայանալու է «Գնենք հայրենականը» խորագրով փառատոն-ցուցահանդես-վաճառք: Փառատոնի գլխավոր ուղղվածությունը թեթեւ արդյունաբերության ոլորտն է: Հայաստանում թեթեւ արդյունաբերությունը բազմաթիվ խնդիրներ ունի, եւ դրանց հաղթահարումը պահանջում է պետության ու մասնավոր հատվածի համատեղ աշխատանք: Կառավարության ուշադրությունը թեթեւ արդյունաբերության ոլորտի հիմնախնդիրների վրա սեւեռելը փառատոնների ծրագիրը կառավարության հավանությանն արժանացավ այս տարվա աորիլին: Էկոնոմիկայի նախարարության արդյունաբերության վարչության պետ **Հայկ Միրզոյանի** խոսքով՝ նախարարությունը, կարեւորելով թեթեւ արդյունաբերության ոլորտի զարգացումը, դեռ 2009-ին բանակցություններ է վարել միջազգային տարբեր կառույցների հետ Հայաստանում դիզայնի դպրոց հիմնելու նպատակով: «Շատ կարեւոր է, որ թեթեւ արդյունաբերության ընկերություններն ունենան իրենց արտադրանքները: Արդեն պայմանավորվածություն ունենք Իտալիայում «Եվրոպայի դիզայնի ինստիտուտի» հետ», տեղեկացրեց Հայկ Միրզոյանը: Ամեն ինչ արվում է, որ այս տարվանից Գյումրիում մեկնարկեն «Եվրոպայի դիզայնի ինստիտուտի» դասընթացները: Անդրադառնալով «Գնենք հայրենականը» փառատոնին՝ Հայկ Միրզոյանն ընկերություններին կոչ արեց մասնակցելու այս միջոցառմանը:

Փառատոնի շրջանակներում կազմակերպվելու է ցուցահանդես-վաճառք, «Ոլորտի մասնագետներին խնդրել ենք ներկայացնել, թե հայկական ինչպիսի՞ բրենդ մենք կարող ենք ձեւավորել եւ ինչպիսի՞ ճաշակ կարող ենք թելադրել աղագայում», տեղեկացրեց Արդյունաբերողների ու գործարարների միության գործադիր տնօրեն **Գագիկ Մակարյանը**:

Բանախոսների փոխանցմամբ՝ ներկայումս կարեւոր խնդիր է, որ Հայաստանում շատ կազմակերպություններ իրենց հայկական բրենդով ներկայանան ինչպես գալիս: Կան ընկերություններ էլ, որոնք կրկնօրինակում են արտասահմանյան բրենդները եւ շարունակում են մնալ սովետային տնտեսության շրջանակում: Ստեղծված իրավիճակում թեթեւ արդյունաբերության խնդիրների լուծմանն ուղղված յուրաքանչյուր քայլ ողջունելի է, այդ թվում եւ «Գնենք հայրենականը» փառատոնը: Երեւանի քաղաքապետարանը եւ էկոնոմիկայի նախարարությունը եւս աջակցում են այս ծրագրին: Հովանավորներն են «Ապավեն», «Վալեխս գրուպ», «Կոկա-կոլա» ընկերությունները, UNIDO միջազգային կազմակերպությունը եւ այլն:

Արդյունաբերողների եւ գործարարների միությունը զբաղվում է նաեւ հայ բիզնեսի բարոյական վարքագծի կոդեքսի մշակումով: «Այստեղ մենք շատ ենք կարեւորում մեր պատմական փորձն ու անցյալի ժառանգությունը նոր սերնդին փոխանցելը», նշեց միության նախագահը: Նշված սկզբունքով է պայմանավորված, որ Արդյունաբերողների եւ գործարարների միությունը եւ Հայաստանի բանկերի միությունը պատրաստվում են 2011 թիվը հայտարարել Ալեքսանդր Մանթաշյանցի տարի: 2011-ին լրանում է հայ մեծանուն բարերարի մահվան 100-ամյակը, իսկ 2012-ին՝ ծննդյան 170-ամյակը: «Կհրաշակվեն Մանթաշյանցին նվիրված գրքեր, ու երեւի թե մեզ հաջողվի կանգնեցնել նրա կիսանդրին», հավելեց Արսեն Ղազարյանը:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Արմեն Ամիրյանը նախընտրում է ռադիոն

Հանրային հեռուստաընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համար Հանրային հեռուստաընկերությունը հայտարարել է մրցույթ: Հանրային հեռուստաընկերության գործադիր տնօրենի պաշտոնակատար Արմեն Ամիրյանի ազգանունը պաշտոնի հավակնորդների ցանկում չկա:

Հանրային հեռուստառադիոխորհրդի նախագահ **Ալեքսան Հարությունյանի** փոխանցմամբ՝ Հանրային հեռուստատեսությունն ու ռադիոն պետք է միավորվեին, ինչի առնչությամբ Ամիրյանը ստացել էր առաջարկ, սակայն առաջիկայում կառույցների միավորում չի սպասվում: Ամիրյանը երկար մտորելուց հետո ընտրել է իրեն հոգեհարազատը՝ ռադիոն: Հանրային ռադիոն պահպանելու է ծրագրերի՝ օրենքով սահմանված բոլոր ուղղությունները՝ մանկական, երաժշտական, մշակութային, քաղաքական-վերլուծական:

Վերանայվել է ազգային փոքրամասնությունների լեզուներով հեռարձակվող ծրագրերի աշխարհագրությունը: Հոկտեմբերի 1-ից դրանք կհեռարձակվեն ավելի հասանելի ռադիոալիքներով: Նախատեսվում է ռադիոյի 17 հազար ձայնագրություններից մոտ 7.000-ը տեղադրել կայքէջում, որպեսզի հասանելի լինի բոլորին:

Նոր եթերաշրջանում նորություններ եւ փոփոխություններ կլինեն նաեւ Հանրային հեռուստատեսությունում: Հիմնական փոփոխությունները լրատվական, քաղաքական եւ վերլուծական ծրագրերի հետ են կապված: «Հայլուրի» թղթակցական կետերը կընդլայնվեն ու տաղավարը կթարմացվի: Արթուր Աբրահամի մարտերն էլ կցուցադրվեն միայն Հ1-ի եթերում:

Հանրային հեռուստառադիոխորհրդի որոշմամբ Գագիկ Բունիաթյանը երկրորդ անգամ նշանակվել է Հ1-ի գլխավոր պրոդյուսեր, Հրաչ Քեռիշյանը՝ հեռուստառադիոընկերության խորհրդի գլխավոր խորհրդական եւ խորհրդին կից ստեղծված գեղարվեստական հանձնաժողովի նախագահ, «Արմենիա» հեռուստաընկերության քաղաքական մեկնաբան Գեւորգ Ալթունյանը՝ «Հայլուր» լրատվական հաղորդաշարի տնօրենի տեղակալ:

Հ. Հ.

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Ալիեւի դժգոհության «կրակոցներն» ու մտահոգ եվրոպացիք

1-ին էջից

Ու չնայած այս ամենին, չնայած մտահոգություններին, դրանց անհասցե ու աննշան ազդեցությունն էլ հենց պատճառ է դառնում, որ զինադադարի խախտումներն ուղղակի առավել մեծ ակտիվությամբ ու հաճախականությամբ են կրկնվում: Մասնավորապես, ըստ Ղարաբաղի պաշտպանության բանակի տվյալների, հենց սեպտեմբերի 5-ի եւ լույս 6-ի գիշերը սկսված կրակոցներն ու զինադադարի խախտումն այդուհետեւ օրվա ընթացքում կրկնվել են 116 անգամ:

Սա բնավ էլ այն տվյալը չէ, որի առնչությամբ ղարաբաղյան հակամարտության բանակցային գործընթացում միջնորդական առաքելություն իրականացնող ԵԱՀԿ Մինսկի խումբը կարող է բավարարվել հայտարարությամբ կամ մտահոգություն արտահայտելով: Առավել եւս, որ այդ խախտումները տեղի են ունենում այն ժամանակ, երբ Ադրբեջանի նախագահի նստավայրում ընթանում էր ԵԱՀԿ Մինսկի խմբի եւ Ալիեւ կրտսերի հանդիպումը:

Ղարաբաղի ՊԲ-ի հաղորդագրության համաձայն, Ադրբեջանի զինված ուժերի առաջապահ ստորաբաժանումները Հադրութի, Մարտունու, Ասկերանի եւ Մարտակերտի շրջանների ուղղություններում տեղակայված ղարաբաղյան դիրքապահների հենակետերի վրա տարբեր տրամաչափի հրաձգային զենքերից եւ դիպուկահար հրացաններից արձակել են մոտ 1015 փամփուշտ: «Պաշտպանության բանակի առաջապահ ստորաբաժանումների ձեռնարկած պատասխան գործողություններից հետո հակառակորդը լռել է», ասված է հաղորդագրությունում:

Ու դեռ չլռող կրակահերթերը շարունակվում են այն ժամանակ, երբ տարածաշրջանում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն արդեն երրորդ օրը: Սեպտեմբերի 6-ին նրանք ժամանել էին Բաքու, որտեղ երեկ նոր միայն հանդիպել են Ադրբեջանի նախագահի հետ: Ալիեւի հետ հանդիպմանը ներկա են եղել ԵԱՀԿ Մինսկի խմբի բոլոր երեք համանախագահները՝ Բեռնար Ֆասիեն, Ռոբերտ Բրադտկեն եւ Իգոր Պոպովը, նաեւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկը: Ի՞նչ են քննարկել, ի՞նչ են որոշել՝ ոչինչ չի հաղորդվում: Համանախագահները երեկ հանդիպել են նաեւ արտգործնախարար Էլմար Մամեդյարովի հետ, քննարկել ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը վերաբերող հարցեր, ինչպես նաեւ ԵԱՀԿ-ի փաստաթղթային առաքելությանը առնչվող մանրամասներ:

Հակամարտության կարգավորման առնչությամբ Բաքվում այս օրերին հանդիպումներ է անցկացնում նաեւ Հարավային Կովկասում Եվրոմիության հատուկ ներկայացուցիչ Պիտեր Սեմնեբին: Ադրբեջանական կայքէջերը տեղեկացնում են, որ Սեմնեբին հանդիպել է Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնքի հետ եւ պարզել նրա տեսակետը բանակցային գործընթացի ու խնդրի կարգավորման տարբերակների առնչությամբ: «Ազերիպրես» գործակալության փոխանցմամբ, Սեմնեբին իբր այդ հանդիպմանը հայտարարել է, թե հակամարտության կարգավորման առնչությամբ ստորագրելիք համաձայնագրում պետք է հաշվի առնվեն «Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանումն ու տեղահանվածների վերադարձը իրենց բնակության վայրեր»:

Տվյալ դեպքում թերեւս գործ ունենք ադրբեջանական լրատվամիջոցների կողմից նորության աղավաղման հերթական դրսեւորման հետ, քանի որ անգամ Պիտեր Սեմնեբիի պարագայում դժվար թե հավատալի է, որ եվրոպացի բարձրաստիճան դիվանագետն իրեն այդքան միամիտ պահեր:

Ամեն դեպքում, **«Ազգն»** արդեն տեղեկացրել էր, որ համանախագահները Բաքվից հետո մինչեւ սեպտեմբերի 10 կլինեն Երեւանում եւ Լեռնային Ղարաբաղում՝ քննարկելու «զինադադարն ամրապնդելու համար անհրաժեշտ լրացուցիչ քայլերը, աջակցելու բոլոր կողմերի փոխզիջումային մթնոլորտին, վերջնական տեսքի բերելու հետագա գործողությունների պայմանները»: Սեպտեմբերի 13-18-ը համանախագահները կմեկնեն Վաշինգտոն, ապա Նյու Յորք՝ կողմերի հետ աշխատելու Միացյալ ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի շրջանակներում:

Այդուհետեւ, սեպտեմբերի վերջից մինչեւ հոկտեմբերի կեսերն ընկած ժամանակահատվածում, Մինսկի խմբի համանախագահները կվերադառնան տարածաշրջան՝ «Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքներում մարդասիրական իրավիճակի գնահատման դաշտային առաքելությունն իրականացնելու համար»: Այս հարցն, ըստ հայտարարության, արդեն իսկ քննարկվել է կողմերի հետ վերջին ամիսների ընթացքում, ընդորում, համաձայնեցվել են նաեւ առաքելության իրականացման սկզբունքները դեռեւս մինչեւ ամառ ընկած ժամանակահատվածում:

Սրանից զատ, համանախագահներն իրենց հայտարարության մեջ նաեւ կոչ էին արել կողմերին զերծ մնալ հրահրիչ հայտարարություններից ու գործողություններից, սակայն Ադրբեջանում միայն այդ հարցում չէ, որ ականջալուր չեն լինում միջնորդների խոսքերին: Բաքվից հնչած հերթական հայտարարության առնչությամբ, թե Հայաստանի նախագահն է մերժել ներկայացված առաջարկները, ու դրա համար չկա առաջընթաց, Հայաստանի ԱԳՆ մամուլի խոսնակ Տիգրան Բալայանը արձագանքել է, թե այդպիսի պահվածքով ու հայտարարությամբ Ադրբեջանն անհաջող փորձում է շեղել միջազգային հանրության ուշադրությունը Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցից:

«Վերջին տարիներին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների նախագահների եւ ԱԳ նախարարների, ԵԱՀԿ անդամ-երկրների արտաքին գործերի նախարարների մակարդակով ընդունվել են մի շարք հայտարարություններ, որտեղ սեւով սպիտակի վրա նշված է բանակցային գործընթացի հիմնական խնդիրը, որից Ադրբեջանը անհաջող կերպով փորձում է շեղել միջազգային հանրության ուշադրությունը, այն է՝ ԼՂ կարգավիճակի հարցը, ինչը պետք է որոշվի ԼՂ բնակչության՝ իրավական պարտադիր ուժ ունեցող կամարտահայտության ճանապարհով», մեկնաբանել է Բալայանը:

Ըստ Հայաստանի արտգործնախարարության, հայտարարության հեղինակ Ադրբեջանի փոխարտգործնախարար Արազ Ազիմովը երբեք չի մասնակցել ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցով գլխավոր հանդիպումներին եւ բանակցությունների բովանդակության մասին գիտի միայն լսելով: Բալայանի ներկայացմամբ, «Ակնհայտ է, որ պարոն Ազիմովին իր ղեկավարությունը գիտակցաբար խաբում է, որպեսզի նա շարունակի առավել վստահ մոլորության մեջ գցել իր երկրի հասարակությանը»:

Վերջնակետը՝ Աղթամար

Թուրքիան բաց է թողնում երրորդ մոլորեցնող «փուշիկը»

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Թուրքական կառավարությունը փորձության եւս մի նոր քայլ է կատարում՝ խառնաբփոթություն առաջացնելու հայերի շրջանում: Անցած կարճ ժամանակահատվածում սա Թուրքիայի երրորդ հաշվարկված քայլն է, որով նա ներքին հակասություններով լի քաղաքական իրավիճակ է ստեղծում հայերի շրջանում, որից էլ ճաշակում է իր գործողությունների քաղցր պտուղները:

Հայկական պատմական հողերին տիրանալուց եւ 1,5 միլիոն բնիկ հայերին ջարդելուց հետո Թուրքիան շատ հեշտությամբ եւ մեծ վարպետությամբ կարողանում է զանազան մեթենայություններ բանեցնել զոհերի հետնորդների շրջանում, որոնք դեռ չեն կարողանում ազգային միաբանություն եւ վճռական կամք դրսեւորել՝ դիմագրավելու համար նրա քողածածկ խաղերը:

Քաղաքական այդ քայլերից առաջինը արձանագրություններն էին, որոնք ոչ միայն հույսեր առաջացրին հայերի մեջ, այլեւ հաջողությամբ հիմարացրին միջազգային հասարակությանը:

Երկրորդը Սամբուլում հայոց պատրիարքական տեղապահի ընտրությունն էր: Թուրքերը քաջալերեցին երկու տարբեր հանձնախմբերի (հոգեւոր խորհրդի եւ ընտրությունների կազմկոմիտեի) ձեւավորումը եւ սամբուլահայերին երկու հակադիր ճակատների բաժանելով կարողացան հասնել այն բանին, որ պատրիարքի տեղապահ «ընտրվեց» Արամ արքեպիսկոպոս Աքեշյանը, աննախադեպ մի երեւույթ ամբողջ հայոց պատրիարքարանի պատմության մեջ: Չնայած «ընտրությունը» դատարաններում ներկայումս վիճարկվում է, Աքեշյանը արդեն վայելում է պտուղները՝ պարելով թուրքական կառավարության սրնգի ներքո:

Այժմ երրորդ քայլն է Թուրքիան առաջարկում մեզ՝ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցում պատարագ մատուցելու տեսքով:

Պատմական այս տաճարում մեկանգամյա արարողություն թույլատրելով՝ թուրքական կառավարությունը շատ հսկայական ձեւով արտահայտում է իր նպատակները, որոնցից առաջինն այն է, որ այդ կառույցը նա չի ճանաչում որպես պաշտամունքի վայր, երկրորդը, որ առիթն օգտագործում է ձեւացնելու, թե կրոնական հանդուրժողականության կողմնակից է՝ որպեսզի հեշտացնի իր անդամակցությունը Եվրոմիությանը, եւ երրորդը, որ դրանով խթանում է նորանոր զբոսաշրջիկների այցելությունն իր երկիր:

Բայց ամենից ավելի նրան հրճվեցնում է այն, որ հայերը միաբան չեն եւ ամեն, նույնիսկ փոքր առիթի դեպքում, նրանք կռվում են մեկը մյուսի դեմ: Այս տեսանկյունից է ահա կարեւորվում շեֆպիրյան հայցնի երկընտրանքային հարցադրումը, որն այս դեպքում հնչում է այսպես՝ գնա՞լ, թե՞ չգնալ:

Հայերն այսպիսով բաժանվում են երկու հակառակ խմբավորումների, որոնք վիճում են մեկը մյուս հետ, մեղադրում մեկը մյուսին, մոռանալով հաճախ Թուրքիայի խարդավանքների մասին:

Սուրբ Էջմիածինը որոշել էր երկու բարձրաստիճան հոգեւորականների ուղարկել մասնակցելու սեպտեմբերի 19-ի արարողությանը եւ «Ազաս Եվրոպա»/«Ազատություն» ռադիոկայաններին տված հարցազրույցում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ-ի անունից հայր Վահրամ Մելիքյանը հավաստիացրել էր, թե իրադարձությունը բոյկոտելու խնդիր չկա: «Հավատացած ենք, որ եթե մեզ հնարավորություն է տրվել խանդաղատանք տածելու դարավոր մի սրբավայրի հանդեպ, որտեղ որոշ պատճառների հետեւանքով առ Աստված աղոթներ չեն հնչում այսօր, ապա մենք պարտավոր ենք օգտվել այդ առիթից եւ մեր ներկայությամբ պաշտպանել մեր սեփականության իրավունքները»,* ասել էր նա:

Միեւնույն լրատվամիջոցներին հակառակ կարծիքն է հայտնել իշխող Հանրապետական կուսակցության ԱԺ խմբակցության քարտուղար **Էդուարդ Շարմազանովը**, որը եկեղեցու մեկօրյա բացումը միջազգային հանրությանը մոլորեցնող ճարպիկ քարոզչական հնարք է համարել:

Այստեղ մենք տարաձայնություն ենք տեսնում իշխանությունների եւ Սուրբ Էջմիածնի միջեւ, մինչեռ ընդդիմությունն ամբողջ ժամանակ մեղադրում էր կաթողիկոսին, որ կառավարության նախաձեռնումներին համահունչ է գործում միշտ: Գոյություն ունի նաեւ տարաձայնություն Սբ Էջմիածնի եւ Անթիլիասի կաթողիկոսարանի միջեւ, որ վերջերս հաղորդագրություն էր տարածել իրադարձությունը բոյկոտելու վերաբերյալ:

Հայկական հանրային հեռուստատեսությամբ հեռաստիռված հարցազրույցի ժամանակ Ցեղասպանության թանգարանի տնօրեն դոկտ. **Հայկ Դեմոյանը** պաշտպանել էր Սբ Էջմիածնի դիրքորոշումը՝ ավելացնելով, որ արարողությունը նաեւ առիթ է հավերժացնելու Գագիկ Արծրունի արքայի եւ ճարտարապետ-քանդակագործ Մանուելի հիշատակները, որոնց շնորհիվ 10-րդ դարում կառուցվել է Սբ Խաչ եկեղեցին: Նա նույնիսկ նշել էր, որ Լոզանի 1923 թվի պայմանագրով այդ եկեղեցին պատկանում է Ստամբուլի պատրիարքարանին:

Իհարկե, մենք բազմիցս կարող ենք կրկնել, որ այդ սրբավայրը մեզ՝ հայերիս է պատկանում, բայց թուրքական կառավարության պաշտոնական պնդումներով այն պետական թանգարան է «Ափդամար» անունով: Օգոստոսի 17-ին թուրք ոստիկանները խոչընդոտել էին «Հայ ասպետ» հեռուստամրցույթի հաղթող թիմի անդամներին մուտք գործել եւ մոմ վառել եկեղեցում, պատճառաբանելով, որ մոմերի ծուխը կարող էր մրոտել պատերը: Ինչպիսի՜ հոգատարություն կառավարության կողմից: Իսկ ի՞նչ ասենք այն 2000 այլ հայկական եկեղեցիների մասին ամբողջ Թուրքիայի տարածքում, որոնք ավերակների, ախոռների կամ մզկիթների են վերածված: Սա նշանակում է, որ սեպտեմբերի 19-ի արարողության ժամանակ, թուրքական թանգարանների օրենքների համաձայն, այցելուները պարտավոր են զերծ մնալ մոմեր վառելուց:

Ծիծաղելով արտաքին աշխարհի վրա, Թուրքիայի կառավարությունը միաժամանակ նացիստական ոճին հարիր հեսազոտություններ է անցկացնում ամբողջ Վանի շրջանում, պարզելու համար, թե իրենց բնակարանները ուխտավորներին տրամադրել ցանկացողները չունե՞ն արդյոք հայկական արմատներ: Եթե պարզվում են, որ ունեն, ապա հետապնդում են նրանց:

Ճակատագրի հեգնանքով գերմանահայոց առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Բեկչյանը մի խումբ եվրոպահայ ուխտավորների է առաջնորդելու սեպտեմբերի 19-ին դեպի Սբ Խաչ եղեկեցի, հակառակ որ դեմ է Ստամբուլում վերջերս կատարված պատրիարքի տեղապահի «ընտրության» արդյունքին: Նա վճռականորեն բողոքել է թուրքական կառավարության որոշման դեմ եւ փորձում է պահպանել իր թեկնածությունը այդ պաշտոնում:

Շրջանառվում էին նաեւ շշուկները, որ Թուրքիայի կառավարությունը, որպես բարի կամքի արտահայտություն, կարող է մեկ օրով՝ սեպտեմբերի 19-ին բացել Հայաստանի հետ սահմանը, սակայն այդ հույսերը հօդս ցնդեցին, երբ Թուրքիան հայտարարեց, որ սահմանը չի բացելու նույնիսկ սեպտեմբերի 11-17-ը նախատեսված ՆԱՏՕ-ի զորավարժությունների համար:

Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն, վերանայելով իր նախկին որոշումը, հայտարարել է, որ բոլոր անհրաժեշտ սարքավորումները թուրքական կողմի մասնակիցներին կհասցվեն Վրաստանի տարածքով: Նմանատիպ հայտարարություն հնչել է նաեւ Բաքվում:

Այնպես որ իրականացում ստեղծելու սցենարն ամբողջությամբ պատրաստ է: Թուրք դիվանագետներն ու քաղաքական գործիչները խորամանկ են եւ քաջ գիտեն, թե ինչ են անում: Նրանք հաշվարկված քայլեր են ձեռնարկում՝ իմանալու համար հայկական կողմի հակազդեցությունը: Նրանք գիտակցում են, որ հատուցման օրը մոտալուտ է, եւ Եվրոմիությանը անդամակցելու համար ստիպված կլինեն գերագույն «զիջման» գնալ ու ճանաչել հայերի դեմ կատարված ցեղասպանությունը:

Իրականում այս բոլոր գործողությունները, որոշ առումով, կարելի է ասել, «գլխավոր թաքստոցի» են, եւ թուրքերը կարծես հրճվում են, որ իրենց թշնամին այդքան մասնատված է: Այնպես որ կարիք չունենք սպասելու սեպտեմբերի 19-ին՝ տեսնելու համար, թե ո՞վ հաղթեց կամ ո՞վ պարտվեց: Թուրքիան արդեն իսկ հաղթանակ է գրանցել իր հաշվին՝ տարաձայնություններ սերմանելով հայկական աշխարհում:

Դետրոյթ, ԱՄՆ
Թարգմ. Հ. Ծ.

** Ինչպես արդեն հայտնի է տարածված հայտարարությունից, «Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը, որ ընդառաջ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության խնդրանքին, սրբազան պատարագին մասնակցություն պիտի բերեր երկու ներկայացուցիչներով, առկախում է նրանց մասնակցությունը սեպտեմբերի 19-ին Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցում մատուցվող սրբազան պատարագի արարողությանը»:*

Քյուրֆյանների գերդաստանի նոր նվիրաբերումները

Լոնդոնի ածուղներից հայկական ձեռագրեր գնելու եւ Մաշտոցի անվան Մատենադարանին նվիրաբերելու ավանդույթը լոնդոնաբնակ Քյուրֆյանների գերդաստանում սկիզբ դրեց Սարգիս Քյուրֆյանը՝ իր կենդանության օրոք Մատենադարանին նվիրաբերելով 7 ձեռագիր՝ 17-րդ դարի «Պատարագամատույց», 16-րդ դարի «Սաղմոսարան», 17 դարի Ավետարան, 16-րդ դարի «Մանրուսմունք» եւ այլն: Հայոց գրի ու գրչության հանդեպ իր պաշտամունքը նա փոխանցեց երկու որդիներին՝ Ջորջին եւ Ջոնին, որոնց համար բարեգործությունը դարձավ կենսաձեւ, հայրենիքին տեր կանգնելու իրական միջոց:

Սարգիս եւ Աստղիկ Քյուրֆյանների առաջնեկը՝ Ջորջը, ծնվեց 1928 -ին Եգիպտոսում, որից հետո ընտանիքը տեղափոխվեց Լոնդոն, ուր Ջորջը փայլուն կրթություն ստացավ՝ դառնալով մի շարք կազմակերպությունների ղեկավար, այդ թվում՝ հայկական համայնքի, միաժամանակ նոր թափ տվեց ընտանեկան բիզնեսին՝ «Սարգիս Նազարեթ Քյուրֆյան» ընկերությանը, որ 1897-ին հիմնել էր պապը՝ Նազարեթը: Ջորջը հորից ժառանգեց ոչ միայն ֆինանսական հաջող գործարքներ կնքելու հմտություններ, այլեւ Հայ առաքելական եկեղեցուն զորավիգ կանգնելու եւ հայկական ձեռագրերը օտար ափերից հայրենիք հասցնելու հանձնառություններ: Նա դարձավ շարունակողը այն հայրենաշատ ծրագրերի, որ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ի-ի որոշ սկսել էր իրականացնել Սարգիս Քյուրֆյանը՝ նրա հետ հաստատելով ջերմ ու ընտանեկան հարաբերություններ: Քյուրֆյան եղբայրների հովանավորությամբ կառուցվեց ոչ միայն Լոնդոնի Սբ Սարգիս եկեղեցին, այլեւ ի նոր վերանորոգվեց Երեւանի Սբ Սարգիս եկեղեցին, որն այն ժամանակ առաջնորդանիստ էր հայաստանյան եկեղեցական կյանքում:

Երկար տարիներ լինելով Հայկական բարեգործական ընդհանուր միության փոխնախագահը, նա իր ուժն ու եռանդը նվիրեց հայրենիքը շենացնելուն եւ հայ հոգեւոր գանձերը փրկելուն: Վազգեն Ի-ի կողմից նա 1976-ին պարգեւատրվեց Հայ առաքելական եկեղեցու անդամանդակուռ շքանշանով, իսկ 1981-ին՝ «Ներսես Շնորհալի» շքանշանով:

Վերջին անգամ Ջորջը հայրենիք այցելեց Ջոնի հետ 2002 թվականին՝ Մատենադարանին նվիրաբերելու 17-րդ դարի նկարազարդ Ավետարան: Ծանր հիվանդությունից հետ 2005-ին նա կնքեց իր մահկանացուն՝ կիսատ թողած գործերն ու գերդաստանի ավանդույթները հանձնելով Ջոնին:

Օրեր առաջ, աշնան առաջին օրերին Ջոնը իր ընտանիքի ուղեկցությամբ հետ եկավ Հայաստան՝ Մատենադարանին հանձնելու 17-րդ դարի գիտական եւ իմաստասիրական նյութերի արժեքավոր ժողովածու, 16-դարի նկարազարդ հմայիլ, հետո այցելելու Մայր աթոռ Սուրբ Էջմիածին՝ մասնակցելու Սբ Գայանեին կից մանկատան շենքի բացման արարողությանը:

Ջոն եւ **Քրիստինա Քյուրֆյաններն** իրենց զավակների հետ մոտ երկու ժամ անցկացրեցին Մատենադարանում, իրենց ներկայությամբ մեծագույն հաճույք պատճառելով մատենադարանցիներին, այդ ժամերը լցնելով լույս ու ժպիտով: Շրջեցին ցուցասրահներում, եղան ձեռագրերի վերանորոգման բաժնում, տեսան, թե ինչ բարվոք վիճակում են Քյուրֆյանների նվիրաբերած ձեռագրերը, Մատենադարանի տնօրեն Հրաչյա Թամրազյանից ստացան հայ մանրանկարչության ալբոմներ, Նարեկացու «Մատյան ողբերգության»-ը, Մատենադարանի 50-ամյակին նվիրված տեսաֆիլմը, իսկ Ջոն Քյուրֆյանն արժանացավ «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» հուշամեդալին:

«Սկզբում հայրս բավականին գործ արեց հայկական ձեռագրեր ձեռք բերելու համար, հետո՝ Ջորջը, ես վերջինն եմ, բայց հույս ունեմ, որ որդիս՝ Քրիստոֆերը, կշարունակի մեր գործը եւ սրանք վերջին ձեռագրերը չեն լինի: Հուսով եմ, շուտով դրանց կհաջորդեն նորերը», ասաց Ջոն Քյուրֆյանը: Տկն Քյուրֆյանն անչափ երջանիկ էր ձեռագրերը նվիրաբերելու համար. «Ուրախ եմ այս ձեռագրերը ձեզ հանձնելու եւ մասնագետներին ուսումնասիրության նոր նյութ մատուցելու համար», ասաց վեհաշուք եւ համեստ ազնվատոհմիկ տիկինը, որի դեմքից սեր եւ իմաստություն էր ճառագում:

Քյուրֆյանների եկեղեցանվեր գործունեությունը շարունակվում է նաեւ այսօր Գարեգին II- ի հետ իրականացնելով ազգաշահ բազում ծրագրեր, որոնցից վերջինը Սբ Գայանե վանքին կից մանկատան բացումն էր: Շենքը հիմնովին վերանորոգվեց Քյուրֆյանների բարերարությամբ՝ ի հիշատակ հոգելույս Ջորջ Քյուրֆյանի եւ նրա դստեր՝ Մարինա Քյուրֆյանի: Մանկատունը նախատեսված է կարիքավոր ընտանիքների եւ ծնողազուրկ 42 մանուկների եւ պատանիների համար: Այն կառուցելու ցանկությունը Ջորջ Քյուրֆյանը հայտնել է մահվան մահճում: Սարգիս եւ Աստղիկ Քյուրֆյանների ածյուններն ամփոփված են Սբ Գայանե գերեզմանատանը, որտեղ էլ մանկատան շենքի բացումից հետո կատարվեց հոգեհանգստյան արարողություն, եւ նրանց շիրիմների կողքին ամփոփվեց մեծ բարերար Ջորջ Քյուրֆյանի ածյունասափորը:

Քյուրֆյանների գերդաստանը, իրոք, այն բացառիկներից է, որոնք իրենց կենսագրությամբ եւ աղբելաձեւով աշխարհին ճանաչելի են դարձնում ազնվատոհմիկ հային: Ջոն Քյուրֆյանը մի քիչ է խոսում ու հասկանում հայերեն, որդին՝ Քրիստոֆերը հասկանում է, բայց չի խոսում, ցանկանք, որ թոռը Նարեկացու «Մատյանը» կարդա հայերեն:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

«Անցյալի հիշողությունները»՝ գլխավորապես անգլախոս սփյուռքահայերի եւ օտարների համար

Լոնդոնում գործող «Օսին եւ Մակոլի» հրատարակչատունը հուլիսին լույս է ընծայել Սերժ Մոմճյանի «Անցյալի հիշողություններ» («Memories of the Past», London, Austin & Macauley publishers) գիրքը. «**Ազգ**»-ի խմբագրությունը, բացի մամուլի հաղորդագրությունից, շնորհակալությամբ ստացել է նաեւ, իր խնդրանքով, մեկ օրինակ հատորից՝ ընթերցողներին ներկայացնելու նպատակով:

«Անցյալի հիշողություններ» գիրքը (190 էջ, գինը՝ 7,99 ֆունտ ստեռլինգ) ձոնված է հայազգի ընթերցողների ներկա եւ ապագա սերունդներին, ովքեր հետաքրքրություն կցուցաբերեն ծանոթանալու իրենց անցյալի հարուստ մշակույթի ժառանգությանը՝ դրանով իսկ փորձելով ավելի լավ ճանաչել իրենք իրենց:



Գրքում ներկայացված է Վարդան Աբելյանի պատմությունը (բոլոր գործող անձանց անուններն ու դերերի նկարագրությունները հնարովի են), ով երկու տարեկանում 20-րդ դարի առաջին եւ խոշորագույն կոտորածում կորցնում է իր ծնողներին եւ ինքը՝ մազապուրծ ու Կահիրե (Եգիպտոս) է փոխադրվում իր հորեղբոր՝ Հովսեփի հոգատար խնամքի ներքո: 1930-ական թվերին, ԱՄՆ-ի համար ճգնաժամային այդ տարիներին, նա տեղափոխվում է «Նոր աշխարհ», որտեղ մի կերպ հաղթահարելով ինչպես լեզվական, այնպես էլ սոցիալական դժվարությունները՝ հետզհետե սկսում է խորամուխ լինել ոչ միայն իր սեփական արմատների, այլեւ իր ժողովրդի անցյալի հարուստ պատմության ամենափառավոր էջերի մեջ: Վարդանի կյանքն ամբողջովին փոխվում է, երբ հերթական անգամ «Հայ տուն» մշակութային կենտրոն այցելելով՝ պատահաբար, թերթում տպագրված մի փոքրիկ լրատվության միջոցով իմանում է, որ մայրը Թուրքիայում ողջ է, բայց մահմեդականացած եւ բոլորի կողմից մոռացության մատնված: Մոտ յոթ տասնամյակի բաժանումից հետո նա հասնում է իր ծննդավայր՝ Ուրֆա եւ ողջագուրվում հարազատ մոր հետ:

Սերժ Մոմճյանը ծնվել է Բեյրութում (դժբախտաբար չի նշված գրքում ծննդյան տարեթիվը): Երիտասարդ տարիքում Լոնդոն տեղափոխվելով՝ նախ սովորել է լրագրության, իսկ հետո հետեւել գեղարվեստական վեպեր գրելու վկայական շնորհող հատուկ կուրսերի: Որպես գրող եւ գրախոսող աշխատել է մի շարք հրատարակչություններում, ներառյալ Բեյրութի «Դեյլի Սթարը», որը Մերձավոր Արեւելքում անգլերեն հրատարակվող առաջնակարգ օրաթերթ է, եւ Լոնդոնի «Իվենտս» պարբերականին: Հեղինակ է «Հակամարտային խթաններ» (1994 թ.), «Անտեսանելի գիծը» (2000 թ.) եւ «Օթերայի երգիչը» (2004) վեպերի, որոնք Լոնդոնում են հրատարակված եւ գրականագետների ուշադրությանն արժանացած իրենց ներկայացրած հարցերին ոչ սանդարս, յուրահատուկ մոտեցում ցուցաբերելու համար: «Անցյալ հիշողությունները» նրա առաջին պատմական վեպն է:

Վերջին տարիներին նմանատիպ գրքեր շատ են գրվում: Պատճառը հավանաբար մեծագույն ողբերգության մոտալուտ 100-ամյակն է: Այս մեկը հիշեցնում է 1997-ին հրատարակված Պիտեր Բալֆյանի «Ճակատագրի սեւ շունը» հատորը, բայց անշուշտ չունի նրա սուր եւ հրաշալի պոյուժետային զարգացումը: Բավականին թույլ է գեղարվեստական պատկերների, մարդկային բնավորությունների, տրամադրությունների եւ դեպքերի նկարագրությունների մատուցումը: Պակասում են ազգային պատկանելության, ժամանակաշրջանի, միջավայրի, կենցաղի եւ այլ առանձնահատկությունները բնութագրող գեղարվեստական գունավորումը, ապրումների, երեւույթների ընկալման եւ գնահատման գեղագիտական զգացմունքը: Երբեմն (13-18-րդ գլուխներում) նյութը սահմանափակվում է դեպքերի սոսկ հաջորդական նկարագրությամբ, որը դրանց տալիս է դասագրային բնույթ: Եվ ամենակարեւորը՝ նշված բոլոր հերոսական դեմքերի (Տիգրան Մեծ, Վարդան Մամիկոնյան, Մեսրոպ Մաշտոց, Լեւոն Ա եւ այլք) շարքում, որոնցում երբեմն երկրորդական-երրորդական անուններ կան, անտեսված է Զորավար Անդրանիկը, որի անվան հետ են կապված մեր պատմության կարեւորագույն հաղթարշավները: Եվ եթե Արարատ լեռան առնչությամբ նշվում է Դորպատի համալսարանի պրոֆ. Ֆ. Պարրոտի անունը, ապա պետք է նշվեր նաեւ Խաչատուր Աբովյանի անունը: Այդուհանդերձ գիրքը հետաքրքրությամբ է կարդացվում, դյուրըմբռնելի է, շարադրանքը զերծ է բարդ կառուցվածքներից, եւ որոշ հատվածներ (Լաթիֆ Օդոլու իրական դեմքի բացահայտումը, Ուրֆայում մոր հետ հանդիպումը, Նարեկացու «Մատյան ողբերգության» ներկայացումն ու մեկնաբանությունները) ուղղակի ցնցող են եւ առինքնող:

Չլինելով պատմաբան՝ չենք անդրադառնում գրքում նշված պատմական փաստերի ճշգրտությանը, սակայն ենթադրում ենք, որ իրողությունները ներկայացված են ճշմարտացիորեն՝ հիմնվելով այն երախտագիտական խոսքերի վրա, որ հեղինակը հատորի սկզբում հայտնում է ընդհանրապես Հայկական հանրային գրադարանի աշխատակիցներին եւ մասնավորապես Դիրբորնի Միչիգան համալսարանի պատմության դասախոս, պրոֆ. Արա Սանջյանին այդ բնագավառում իրեն ցուցաբերված անշահախնդիր օժանդակության համար:

Գիրքը արդարացիորեն կարող է ծառայել, ինչպես նշված է «Ջոնված է» էջում, հայազգի, բայց այլալեզու ընթերցողների այն սերունդներին, ովքեր նոր են բացահայտում իրենք իրենց եւ ծանոթանում իրենց անցյալի պատմությանը:

ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆ

Էրոլ Օզբորայի «Թուրքիա. Հավիտենական պուտչը» լույս է տեսել Ֆրանսիայում

Ալֆորվիլում տեղակայված Ջոպանյան ինստիտուտից **Ժան Վարուժան Սրապյանը** տեղեկացնում է, որ «Սիժեստ» հրատարակչությունը օրերս ֆրանսերեն լեզվով լույս է ընծայել թուրք լրագրող Էրոլ Օզբորայի «Թուրքիա. Հավիտենական պուտչը» խորագրով հատորը (52 էջ), որտեղ Թուրքիայի քաղաքական վարչակարգը ներկայացված է որպես «ամենաժամանակավրեպն ու արխայիկը» Եվրոպայում: «Դա «թաքուն ամբողջատիրության» (տիպական) վարչակարգ է, որտեղ բանակը գերագույն իշխանությունն է՝ ժողովրդի ընտրած թեկնածուների նկատմամբ: Որոշ կառույցներ, օրինակ «Ազգային անվտանգության խորհուրդը», որի անդամները հիմնականում զինվորականներ են, նախատեսված են վերահսկելու եւ գրականության ենթարկելու քաղաքացիական կառավարության անդամներին: Երկրի առաջ ծառացած հիմնախնդիրներին (քրդական, կիպրական, հայկական) ոչ մի լուծում հնարավոր չէ գտնել նման համակարգում: Այս հոգեական խանգարումներից տառապող վարչակարգը, որտեղ իսկական իշխանությունը երբեք ընտրված խորհրդարանականներին չի պատկանել, հեղինակի կողմից բնութագրվում է որպես «հավիտենական պուտչի» վարչակարգ», նշված է գիրքը ներկայացնող հաղորդագրության մեջ:

Իսկ գրքի նախաբանում **Նիկոս Լիգերոսը** հեղինակի մասին գրել է հետեւյալը. «Էրոլ Օզբորայը սոսկ լրագրող եւ մտավորական չէ, այլ խաղաղության համար պայքարող իսկական մարտիկ՝ Ալբեր Քամյուի տարողությամբ: Նրա գիրքը սովորական պարսավագիր չէ, այլ (իսկական) մեղադրական ակտ»:

Օզբորայը ծնվել է Ստամբուլում: Լրագրող է եւ խմբագիր: Նաեւ քաղաքական մեկնաբան եւ խորհրդատու: Ապրում է Ստամբուլում եւ Փարիզում: «Ո՞ր նախադասությամբ կբնութագրեիք ձեր գիրքը» հարցին նա պատասխանել է. «Մենք ապրում ենք հետստալինսար վարչակարգի՝ «թաքուն ամբողջատիրության» իշխանության ներքո, որտեղ ամեն ինչ մշտապես պայմանավորված է, վերահսկված, գրականության ենթարկված եւ տնօրինված համազգեսավոր Տերերի կողմից»:

«Իսկ եթե ձեր գիրքը երաժշտություն համարեիք, ո՞ր ստեղծագործությունը կլիներ դա» հարցին տվել է «Ռավելի «Բոլերոն»» պատասխանը, եւ ընթերցողներին ուղղված իր խոսքում նշել է. «87 տարիներ շարունակ այս երկիրը ստի եւ բռնության միջոցով են կառավարել: Ամեն ինչ արհեստական է. աշխարհիկ լինելը, պառլամենտարիզմը, պատմությունը, քաղաքացիների դերը եւ այլն: Միակ լուծումը այս երկրում իսկական ժողովրդավարություն հաստատելն է, եւ այդ գործում գլխավոր դերը Եվրոմիությունը պետք է խաղա»:

Մանրամասնությունների համար այցելել «http//editions.sigest.net/page000101 1c.html» կայքը:

Հ. Ծ.

ՀՈՒՆԱՍՏԱՆ

Լուրջ փոփոխություններ Պաղանդրեուի կառավարությունում

Հունաստանի վարչապետ Գեորգիոս Պապանդրեուն էական փոփոխություններ է կատարել իր կառավարությունում: Բազմաժամյա վիճաբանություններից համաձայնեցված նոր նշանակումների մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Ֆինանսների նախարարությունում անցկացվել են խոշոր փոխատեղումներ, սակայն նախարար Յորգոս Պապակոնստանտինուն մնացել է իր պաշտոնում: Նա կարեւոր դեմք է Հունաստանի կառավարությունում, որի գլխավոր խնդիրը տնտեսական բարեփոխումներն են:

Էկոնոմիկայի եւ մրցակցության նախարար է նշանակվել Միխալիս Խրիստոդուլիդիսը, որն անցյալում գլխավորում էր հասարակական կարգի նախարարությունը: Էկոնոմիկայի նախկին նախարար Լուկա Կացելին կզբաղեցնի աշխատանքի նախարարի պաշտոնը, իսկ այդ պաշտոնը թողած Անդրեաս Լովերդոսը դարձել է առողջապահության նախարար: Հասարակական կարգի նախարար է նշանակվել Խրիստոս Պապուցիսը, որը վերջերս խորհրդարանում PASOK կառավարող կուսակցության ներկայացուցիչն էր:

Հունաստանի կառավարությունում տեղի են ունեցել նաեւ կառուցվածքային փոփոխություններ: Վերստեղծվել է առեւտրական նավատորմի նախարարությունը, որ ավելի վաղ լուծարել էր Պապանդրեուն: Բացի դրանից, կառավարության կազմը ընդլայնվել է՝ 36-ից հասնելով 48 անձի, որոնցից 17-ը նախարարներ են: Ընդլայնումը տեղի է ունեցել փոխնախարարների պաշտոնների ստեղծման հաշվին:

Նոր կառավարությունը երդում է տվել սեպտեմբերի 7-ին: Նույն օրը Եվրոմիության երկրների ֆինանսների նախարարները որոշել են Հունաստանին հատկացնել կայունացման վարկի երկրորդ մասնաբաժինը: 20 մլրդ եվրո կազմող առաջին մասնաբաժինը ԵՄ-ը եւ ԱՄՆ-ն Հունաստանին հատկացրել էին 2010-ի մայիսին: Որոշված է հատկացնել ընդամենը 110 մլրդ եվրո:

Ֆինանսական օգնության դիմաց Հունաստանի կառավարությունը ընդունել է բյուջեի պակասորդի կրճատման ծրագիր: Մասնավորապես սառեցվելու են կենսաթոշակները եւ կրճատվելու են պետծառայողների աշխատավարձերը:

ԿԺԴՀ-ն ԱՄՆ-ից պահանջում է հանել զորքը Հվ. Կորեայից

ԿԺԴՀ-ն Միացյալ Նահանգներից պահանջել է դուրս բերել զորքը Կորեական թերակղզու հարավային մասից: ԿԺԴՀ ԳԱ իրավաբանության ինստիտուտի հայտարարության մեջ նշվում է, որ ԱՄՆ-ը «պարբերաբար օկուպացրել է Հարավային Կորեան, այնտեղ հաստատելով գաղութային տիրապետություն»:

Ինստիտուտի փորձագետները հիշեցրել են, որ «1945-ի օգոստոսին Կորեայի ժողովրդահեղափոխական բանակի եւ խորհրդային զինված ուժերի խորտակիչ հարվածները հանգեցրին կվանտունյան բանակի լիակատար ջախջախմանը, Հեռավոր Արեւելքում ռազմաքաղաքական իրադրության կտրուկ փոփոխմանը եւ, վերջին հաշվով, Ճապոնիայի արագ կապիտուլացմանը»:

Սակայն Վաշինգտոնը «ճապոնական բանակի զինաթափման» պատրվակով 38-րդ զուգահեռականից հարավ ընկած տարածքը հայտարարեց սեփական օկուպացիոն գոտի: Ամերիկյան զորքերը Կորեական թերակղզու հարավում հայտնվեցին 1945-ի սեպտեմբերի 8-ին, այսինքն 2-րդ աշխարհամարտի ավարտից հետո:

Հայտարարության մեջ նշվում է, որ այդ գործողությունները «դարձան կորեական ազգի ինքնիշխանության, միջազգային իրավական նորմերի եւ Կորեային վերաբերող համաձայնագրերի կոպտագույն խախտումներ»:

Հետագայում ԱՄՆ-ի մեղքով սանձազերծված 1950-1953 թթ. Կորեական պատերազմը «կորեացիներին բերեց անթիվ աղետներ ու տառապանքներ»: 21-րդ դարում եւս ԱՄՆ-ի սադրիչ քաղաքականության պատճառով Կորեական թերակղզում «պատերազմի վտանգը պահպանվում է», նշվում է հայտարարության մեջ:

Հյուսիսկորեացի իրավաբանները իրենց օտարերկրացի գործընկերներին կոչ են անում աջակցել տարածաշրջանից ամերիկյան զորքերի դուրսբերման համար կորեացիների ծավալած պայքարին:

Նաթանյահու. «Հաշտությունը հնարավոր է մեկ տարուց»

Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն հույս է հայտնել, որ պաղեստինցիների հետ հաշտության համաձայնագիր կստորագրվի մեկ տարվա ընթացքում:

Ամերիկացի կոնգրեսականների հետ կազմակերպված հանդիպման ժամանակ Նաթանյահուն հայտարարել է. «Ես հավատում եմ, որ առանց ընդմիջումների անցկացվող ուղղակի բանակցությունների միջոցով մենք կարող ենք հաշտության հասնել մեկ տարվա ընթացքում»:

Վարչապետը նաեւ ընդգծել է, որ բանակցությունների նպատակը՝ պաղեստինյան անկախ պետության ստեղծումը, հնարավոր է միջնորդների միջազգային խմբակի (ԱՄՆ, ՌԴ, ՄԱԿ, ԵՄ) օգնությամբ:

Աբբաս-Նաթանյահու բանակցությունների հաջորդ փուլը պետքարտուղար Հիլարի Քլինթոնի մասնակցությամբ տեղի կունենա սեպտեմբերի 14-ին Եգիպտոսում: Ներկայումս բանակցությունների ընթացքին խանգարող հնարավոր գլխավոր վտանգը Այսրհորդանանի հրեական ավաններում շինարարության վերսկսումն է: Դիտորդները չեն բացառում կողմերի ոչ պաշտոնական փոխզիջումը, այն է՝ շինարարությունը կարող է վերսկսվել ավանների միայն խոշոր բլոկներում, որոնք հաշտության համաձայնագրի ստորագրումից հետո հավանաբար կմնան Իսրայելի իրավադատության տակ:

Վախթանգ Հարությունյան. «Անհեռատեսություն է հեղինակային երգի փառատոնի համար գումար չտրամադրելը»

Հեղինակային երգի ամենաբաթյա երեկոները, որ ընթանում են արդեն մեկ տարի անընդմեջ The Club-ում, ամառային հանգստի շրջանից հետո կվերսկսվեն սեպտեմբերի 17-ին: Հենց դա էլ Հայաստանում հեղինակային երգի հասանելիության ու պահանջվածության մասին ավելի քան հարյուր երգերի ու բանաստեղծությունների հեղինակ, «Հայոց տաճարներ» ֆիլմաշարի հեղինակ-պրոդյուսեր, «Ցնորք», «Վերադարձ», «Ես ու Ես» ալբոմների հեղինակ Վախթանգ Հարությունյանի հետ զրույցի առիթ դարձավ:

- Հայաստանում հեղինակային երգը պահանջվա՞ծ է, ունկնդիր ունի՞:

- Վստահաբար ունի: Պարզապես ներկայացնելու ասպարեզն է անպատկերացնելիորեն նեղացվել: Ներկայացնելու փիչ ավելի նպաստավոր պայմաններում, քան մեր իսկ ստեղծածը, անկասկած շատ ավելի մեծ լսարան կունենային հեղինակային երգերը:

- Այնուամենայնիվ, այսօր հեղինակային երգը հասանելի է նախընտրողներին: Ի՞նչ միջոցներով:

- Բնականաբար, օգտագործվում են սոցիալական ցանցերի ու ընդհանրապես համացանցի ստեղծած հնարավորությունները, բայց, իմ խորին համոզմամբ, առաջնայինն ու իրապես ազդեցիկը համերգն է, որ հեղինակային երգի դեպքում մտքերի փոխանակում է ու արտերի կամուրջ:

- Համերգներն ի՞նչ ընդգրկմամբ եւ որչա՞փ հաճախակի են լինում:

- Մեկ տարի առաջ 7 հոգով հավաքվեցինք, եւ ի պատիվ ու ի մեծարումն թարգմանիչ Ռաֆայել Պապայանի, որ Բուլաս Օկուջավայի գործերի փայլուն թարգմանությունների հեղինակ է, համերգ կազմակերպեցինք: Օկուջավայի գործերն էինք կատարում, եւ երեքուկես ժամ անց էլ ունկնդիրը դահլիճը չէր լքում: Իսկ բարդերին, որ անհասականություններ են, համախմբելը ամենադժվար, անգամ անհնար բաներից մեկն է: Ինչ-որ չափով խենթ պետք է լինել՝ նման նախաձեռնության գնալու համար: Բայց մշակույթի նախարարության եւ այլ կառույցների պարապուրդի պատճառով ինքնարտահայտվելու տիրույթը կորցրել էինք, ու դա էլ նկատի առնելով՝ The Club-ի տնօրենության հետ որոշեցինք գնալ նման խելառության, չէ որ գրվածը պիտի հնչեր, ի վերջո դա է նաեւ հղկում ու որոշում տվյալ գործի կյանքը: Ու հեղինակային երգի երեկոները դարձրինք ամենաբաթյա, հատկապես որ նման փորձ արդեն կար: Դեռ 1990-ականների սկզբից երգահան Արարատ Բոբիկյանը նման համերգներ էր կազմակերպում, որոնք կոչվում էին «Համերգ՝ մոմի լույսով», եւ այն ցուրտ տարիներին ասում էր. «Խավարը մեր ներսում է»: Այդ խավարն էր փորձում ցրել հեղինակային երգի երեկոներով:

- Ժամանակը ցույց տվեց, որ այդ նպատակին մեծապես նպաստեցին համերգները, իսկ այսօր ի՞նչ դեր են կատարում այդ երեկոները:

- Ինչպես դաժան 1990-ին, երբ հեղինակային երգի երեկոները տեղի էին ունենում Ճարտարապետների միության դահլիճում, որտեղ սարսափելի ցուրտ էր. մի նավթավառը բեմում էր, մյուսը՝ բեմից ցած, ձեռքերս մի կերպ տաքացնելով ելույթ էինք ունենում, այնպես էլ հիմա, երբ հարմարավետությունն ամբողջական է, եւ յուրաքանչյուր ուրբաթ երեկոն էլ՝ համերգային, դրանք միակ վայրն են, ուր մենք միմյանց հետ կիսում ենք ամեն ինչ՝ թե՛ գրածը, թե՛ ապրածը: Վերջ ի վերջո հեղինակային երգի երեկոները լուծում են ոչ միայն լսված լինելու շատ կարեւոր խնդիրը, այլեւ ճաշակ են մշակում, կրթում, միջավայր ու մտածողություն ստեղծում: Այսինքն՝ այն, ինչ պետության խնդիրն է, անհատ նախաձեռնողներն անջատ-անջատ մասնակիորեն լուծում են: Գուցե մենք այդ համերգները չկազմակերպենք, եթե լրատվամիջոցները անդրադառնային երեւույթին, չթողնեին թափուր այդ տիրույթը, եթե բարձր արժեհամակարգի վրա հիմնված մտածողությունն ու ճաշակը, այնուամենայնիվ, գերիշխող լինեին, եթե ժողովրդի սվար զանգվածը ցածրն ընկալելու հակումը ձեռք բերած չլիներ: Իսկ ժողովուրդն ընդունում է այն, ինչ իրեն այսօր է հասու, մինչդեռ մշակույթն այլ՝ ժողովրդին վաղվա օրը ցույց տալու խնդիր ունի: Իսկ այսօր ամենուր պարտադրանքին հավասարազոր տրվում են պարզունակն ու անարժեքը, եւ մեծամասնությանը տանում դեգրադացման, սպառողական մտածողության: Հետո էլ ասում ենք, թե ազգը ճգտում չի դրսեւորում: Մինչդեռ ճգտում

քան մեր իսկ ստեղծածը, անկասկած շատ ավելի մեծ լսարան կունենային հեղինակային երգերը:

- Այնուամենայնիվ, այսօր հեղինակային երգը հասանելի է նախընտրողներին: Ի՞նչ միջոցներով:

- Բնականաբար, օգտագործվում են սոցիալական ցանցերի ու ընդհանրապես համացանցի ստեղծած հնարավորությունները, բայց, իմ խորին համոզմամբ, առաջնայինն ու իրապես ազդեցիկը համերգն է, որ հեղինակային երգի դեպքում մտքերի փոխանակում է ու արտերի կամուրջ:

- Համերգներն ի՞նչ ընդգրկմամբ եւ որչա՞փ հաճախակի են լինում:

- Մեկ տարի առաջ 7 հոգով հավաքվեցինք, եւ ի պատիվ ու ի մեծարումն թարգմանիչ Ռաֆայել Պապայանի, որ Բուլաս Օկուջավայի գործերի փայլուն թարգմանությունների հեղինակ է, համերգ կազմակերպեցինք: Օկուջավայի գործերն էինք կատարում, եւ երեքուկես ժամ անց էլ ունկնդիրը դահլիճը չէր լքում: Իսկ բարդերին, որ անհասականություններ են, համախմբելը ամենադժվար, անգամ անհնար բաներից մեկն է: Ինչ-որ չափով խենթ պետք է լինել՝ նման նախաձեռնության գնալու համար: Բայց մշակույթի նախարարության եւ այլ կառույցների պարապուրդի պատճառով ինքնարտահայտվելու տիրույթը կորցրել էինք, ու դա էլ նկատի առնելով՝ The Club-ի տնօրենության հետ որոշեցինք գնալ նման խելառության, չէ որ գրվածը պիտի հնչեր, ի վերջո դա է նաեւ հղկում ու որոշում տվյալ գործի կյանքը: Ու հեղինակային երգի երեկոները դարձրինք ամենաբաթյա, հատկապես որ նման փորձ արդեն կար: Դեռ 1990-ականների սկզբից երգահան Արարատ Բոբիկյանը նման համերգներ էր կազմակերպում, որոնք կոչվում էին «Համերգ՝ մոմի լույսով», եւ այն ցուրտ տարիներին ասում էր. «Խավարը մեր ներսում է»: Այդ խավարն էր փորձում ցրել հեղինակային երգի երեկոներով:

- Ժամանակը ցույց տվեց, որ այդ նպատակին մեծապես նպաստեցին համերգները, իսկ այսօր ի՞նչ դեր են կատարում այդ երեկոները:

- Ինչպես դաժան 1990-ին, երբ հեղինակային երգի երեկոները տեղի էին ունենում Ճարտարապետների միության դահլիճում, որտեղ սարսափելի ցուրտ էր. մի նավթավառը բեմում էր, մյուսը՝ բեմից ցած, ձեռքերս մի կերպ տաքացնելով ելույթ էինք ունենում, այնպես էլ հիմա, երբ հարմարավետությունն ամբողջական է, եւ յուրաքանչյուր ուրբաթ երեկոն էլ՝ համերգային, դրանք միակ վայրն են, ուր մենք միմյանց հետ կիսում ենք ամեն ինչ՝ թե՛ գրածը, թե՛ ապրածը: Վերջ ի վերջո հեղինակային երգի երեկոները լուծում են ոչ միայն լսված լինելու շատ կարեւոր խնդիրը, այլեւ ճաշակ են մշակում, կրթում, միջավայր ու մտածողություն ստեղծում: Այսինքն՝ այն, ինչ պետության խնդիրն է, անհատ նախաձեռնողներն անջատ-անջատ մասնակիորեն լուծում են: Գուցե մենք այդ համերգները չկազմակերպենք, եթե լրատվամիջոցները անդրադառնային երեւույթին, չթողնեին թափուր այդ տիրույթը, եթե բարձր արժեհամակարգի վրա հիմնված մտածողությունն ու ճաշակը, այնուամենայնիվ, գերիշխող լինեին, եթե ժողովրդի սվար զանգվածը ցածրն ընկալելու հակումը ձեռք բերած չլիներ: Իսկ ժողովուրդն ընդունում է այն, ինչ իրեն այսօր է հասու, մինչդեռ մշակույթն այլ՝ ժողովրդին վաղվա օրը ցույց տալու խնդիր ունի: Իսկ այսօր ամենուր պարտադրանքին հավասարազոր տրվում են պարզունակն ու անարժեքը, եւ մեծամասնությանը տանում դեգրադացման, սպառողական մտածողության: Հետո էլ ասում ենք, թե ազգը ճգտում չի դրսեւորում: Մինչդեռ ճգտում էինք մեր արարչագործության մեջ մեր տաճած քարի կողքին եւս մեկը դնել, այսօր եղած մեկն էլ ենք քանդում: Էլ ինչո՞վ ենք տարբերվում բարբարոս ազգերից, որ գերեզման են քանդել-հետները տարել՝ հետք չմնա:

- Հեղինակային երգի փառատոնը Հայաստանում կարծես հաստատուն հաճախականություն չի ստանում: Ո՞րն է պատճառը:

- Նախ ասեմ՝ հեղինակային երգի փառատոնն առաջին անգամ կազմակերպվել ու անցկացվել է Եղեգնաձորում՝ 1988-ին եւ հաջորդաբար անցկացվել մինչեւ 1994 թվականը: Նախաձեռնող եւ կազմակերպիչն էր երգիչ-երգահան, իմ ավագ ընկեր Արմեն Ադամյանը: 2000 թվականին մեկ անգամ էլ տեղի ունեցավ հեղինակային երգի փառատոն, որի կազմակերպիչները ստացան մշակույթի նախարարության որոշակի աջակցություն, բայց դա կատարվեց մեկանգամյա ակցիայի պես, իսկ կազմակերպիչ՝ «Ընթացք» ՀԸ տնօրեն Հովհաննես Խաչատրյանի՝ Հայաստանից հեռանալուց հետո մոռացվեց թե՛ փառատոնը, թե՛ նրա ամենամյա լինելը: 2006 թվականին այն կրկին վերականգնվեց «Օվացիա» պրոդյուսերական կենտրոնի շնորհիվ: Այժմ կազմակերպչական աշխատանքներն իրականացնում է Մշակույթի զարգացման հիմնադրամը՝ «Ոսկե կիթառ» փառատոնի տնօրեն Սամվել Մեսրոպյանի գլխավորությամբ: Հաջորդած երկու տարիներին էլ փառատոնը անցկացվեց, իսկ 2009-ին որոշողը եղավ ճգնաժամը, եւ չնայած այս տարի ՀՀ կառավարությունը հայտարարեց, որ ճգնաժամը հաղթահարել-առաջ ենք անցել, մշակույթի նախարարությունն էլ խոստացավ հավուր պատշաճի աջակցել փառատոնի անցկացմանը, այնուամենայնիվ, հրաժարվեց ֆինանսավորել՝ պատճառաբանելով, թե միջոցներ չկան, եւ տեղեկացնելով, որ դրանք 2 մլն դրամի չափով կտրամադրվեն միայն 2011-ին: Ճիշտ է, սա ասվել է ոչ պաշտոնապես, բայց այնուամենայնիվ տխուր է, երբ նման կերպով են վերաբերվում մեր հարգարժան պետական այրերը ... Այս բազմակետն էլ՝ ձեր մեկնությանը: Բայց սրա կողքին փառատոներ տեղի ունեցան, որոնք աղետալի անարդյունավետ էին՝ նվիրված մի երաժշտական գործիքի եւ սահմանափակված կոնսերվատորիայի պատերի ու այդ հաստատության ուսանողների շրջանակով: Այս իրավիճակում առավել անհեռատես ու վիրավորական է հեղինակային երգի փառատոնին գումար չտրամադրելը: Ի դեպ, 25 մասնակիցներից յուրաքանչյուրն իր գործն ունի, եւ հեղինակային երգը նրանց հոգու պահանջն է, եւ յուրաքանչյուրը փառատոնից ֆինանսական որեւէ շահ չհետապնդելով՝ պատրաստակամ է 7 օրվա ընթացքում հանդես գալու 5 համերգով (Մեղրի, Կապան, Եղեգնաձոր, Ստեփանակերտ) եւ եզրափակիչ գալա համերգով Երեւանում, որպեսզի Հայաստանն իմանա, որ այս տեսակ երգ էլ կա: Թող մեծամիտ չհնչի, բայց մաքուր խոսքի ու մտքի տիրույթը հենց բարդերինն է: Վիրավորական է, որ ամենահաս աղբը շարունակում է մնալ առանց այլընտրանքի: Իսկ այլընտրանքի գոյությունը փաստում ենք փառատոնով նույնպես, քանի որ հեռուստատեսությունն այդ առաքելությունը մոռացել ու, այլանդակությունը հեռարձակելով, քարոզում է չես հասկանում ինչ, ու այդ անհասկանալին դարձնում արժեքներ, որոնք հեռու են բարձրարժեքից, մաքրագործողից: Այս ամբողջի հետ էլ պարզվեց, որ մշակույթի նախարարությունն ավելի կարեւոր գործեր ունի, քան արժեքավոր այլընտրանքը ներկայացնելու հնարավորություն ընձեռելն է, հետեւաբար՝ այդ քարոզի ջատագով մասնակիցներից մեկն էլ ինքն է:

Հարցազրույցը վարեց
ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

ԶՈՆ

Երգի թեւերով

Ռոբերտ Ամիրխանյանին

Հայ երգը... Հայ երգը մի վսեմ պատմություն է... Հայ երգը «բազմած լուսնի նուրբ շողերին, հովի թեւին թռչելով» Հայոց աշխարհի գավառից գավառ, դարեդար վառել է հայ մարդու հոգու մեջ օջախի, ապրելու եւ հարատեւելու անմար ճրագը: «Ամպի տակից դոշ տալով փրփրուն», «դարիվ-դարիվ խփվելով» ժամանակի հունի մեջ, խնկարկված սեգ լեռների կարկաչախոս ու վճիտ աղբյուրների օրհներգով, գեղատեսիլ հովիտների, դաշտերի ու անդնդախոր կիրճերի բազմերանգ ծաղիկների արբեցնող բույրով, եկել հասել է մեզ եւ շարունակվում է մեզանով: Հայ երգը հայ մարդու կեցության անբաժանելի մասն է եղել եւ հիմա էլ կա: Այն, ինչպես աղոթքը, մշտապես հնչել է նրա օջախում, արտադեպ՝ ձմեռային խստությամբ: Այդ երգերում կա հայի աչքերի կարոտը... Ի՞նչն է մեզ՝ լսողներիս, հուզում. անկեղծությունը, մեղեդայնությունը, բանաստեղծական շունչը: Նրա մեղեդիները հարուստ են զգացողության բոլոր նրբագույներով, որոնք հատուկ են մարդուն. հումոր, սենտիմենտալություն, ուրախություն, տխրություն, կարոտ, հայրենասիրություն, հավատ, սեր, որոնք պարուրում են մեր հոգին ու շարժում միտքը:

Ռոբերտ Ամիրխանյանի մեղեդիական քանքարը նախաստեղծ մաքրություն ունի եւ բխում է իր միջից մեր հայրենի բնության լեռնային բազմաչ, վճիտ աղբյուրների պես: Նրա երաժշտական խոսքն ունի մարդկային ջերմություն, այս պատճառով էլ նրանք սիրելի են ե՛ւ

հայտել է նրա նիստուկացը, ավանդույթները, կասկն ու տխրությունը, հավատքն ու աշխատանքը, կարոտն ու կանչը, վաստակը, հույսն ու երազանքը...

Հայ երգը հայ մարդու հոգեւոր աշխարհի՝ «Անլռելի զանգակատան», արթուն ժամահարն է եղել... Հայ երգը քարացել է մեր հիասքանչ խաչքարերում, վսեմաշուք վանքերի ու եկեղեցիների սրբացած պատերի մեջ, ամփոփվել մեր գողտրիկ, նախշուն կարպետներում ու գորգերում:

Հայ երգը հայի ոգու երգն է, որն արտահայտվել է դյուցազնական Սասնա ծռերով, հոգեզմայլ ու մեռոնաբաղ շարականով ու տաղով, աստվածային Նարեկացու Ողբերգության Մայրանով, զարմանահրաշ մանրանկարչությամբ, կոմիտասյան արեւախանձ ու քրտնաբույր հորովելով, «մեր հին սազի ողբանվագ, լացակումաց լարով», «նահրյան աղջիկների հեզաձկուն պարով», ոսկեհնչյուն ու գունագեղ, անուշահամ մեր բարբառներով...

Վկա՝ աստվածաշնչյան լյառն Արարատ, որի գագաթի պես «լուսապսակ գագաթ չկա», ուր իջեւանեց Նոյն իր տապանով, եւ մաքրագործված մարդկությունը սկսեց իր առաքինի կյանքը:

Այդ երգը կլսի նա, ով ոտք կդնի «Հայաստան, երկի՛ր դրախտավայր»:

Դարերի երգն է դա: Եվ այդ երգի մեջ են ամփոփված Հայը եւ Հայկազունքը:

Նրա համար երգը ճակատագիր է

60-ականների վերջին երգի դաշտ իջավ Ռոբերտ Ամիրխանյանը եւ այնտեղ գրավեց մի տեղ, ուր ոչ ոք տոտ չէր դրել: Եվ ահա քառասուն տարի է նա այնտեղ է եւ մշակում է պարտեզը իր հոգեզմայլ երգերի, որ պտուղն են իր պարարտ հոգու: Այդ հոգու պարտեզից մեզ են հառնում նրա երգերը տարվա եղանակների նման, երբեմն գարնանային զարթոնքի ուժով եւ բույրով, առավել՝ ամառային թովիչ գիշերվա զմայլանքով, մերթ աշնանային անուշ տրտմությամբ ու հազվադեպ՝ ձմեռային խստությամբ: Այդ երգերում կա հայի աչքերի կարոտը... Ի՞նչն է մեզ՝ լսողներիս, հուզում. անկեղծությունը, մեղեդայնությունը, բանաստեղծական շունչը: Նրա մեղեդիները հարուստ են զգացողության բոլոր նրբագույներով, որոնք հատուկ են մարդուն. հումոր, սենտիմենտալություն, ուրախություն, տխրություն, կարոտ, հայրենասիրություն, հավատ, սեր, որոնք պարուրում են մեր հոգին ու շարժում միտքը:

Ռոբերտ Ամիրխանյանի մեղեդիական քանքարը նախաստեղծ մաքրություն ունի եւ բխում է իր միջից մեր հայրենի բնության լեռնային բազմաչ, վճիտ աղբյուրների պես: Նրա երաժշտական խոսքն ունի մարդկային ջերմություն, այս պատճառով էլ նրանք սիրելի են ե՛ւ երիտասարդ, ե՛ւ միջին, ե՛ւ ավագ սերունդներին: Նրա մի շարք երգերը դասվում են 40-50-ականներին ստեղծված հանճարեղ երգերի շարքը, երգեր, որոնք մշտապես ուղեկցել են իմ սերնդի մարդկանց եւ մինչեւ հիմա էլ շարունակում են հուզել: Ռ. Ամիրխանյանը վերջին քառասուն տարիների հայ քնարաբխարհի ամենաերաժշտական ուղեղն է, կենդանի դասական: Ռ. Ամիրխանյանի բազմաթիվ երգերը, իսկ այդ երգերի գենը սերված է հայ ժողովրդի արվեստի գենից, մնալու են մշտապես, քանի դեռ ապրում է հայը:

Չկա կոմպոզիտորի համար ավելի մեծ երջանկություն, քան այն, որ մի քանի տասնյակ տարիներ հետո, երբ ինքն այլեւս չի լինի, իր մի քանի երգերը ժամանակի ընթացքում կդառնան, ավելի ճիշտ՝ կընկալվեն, իբրեւ ժողովրդական: Մարդիկ կերգեն, չիմանալով, որ դրանք ստեղծել է կոմպոզիտոր: Իսկապես մեծագույն երջանկություն, որը սպասում է Ռ. Ամիրխանյանին: Եվ տարիների խորքից նրա պատմական ժպիտը ժամանակի մեջ կուղեկցի բոլոր սերունդներին, քանի այդ երգերը երգվում են:

Ուրեմն այդ երգերը կլինեն մշտապես ներկա ապագայի ներկայում:

* * *

Երգը՝ մարդու էության առհավատչյան, նրա բազմաբովանդակ կյանքի մշտական ուղեկիցը, մենք լսում ենք դեռ աշխարհ չեկած, մամիկների ստի բաբախումի տակ, մայրական կաթը ուտելիս, օրորոցում, մեր կյանքի ամբողջ ընթացքում, մեր օրերի արշալույսին՝ ցնծության, երիտասարդ տարիներին՝ ավելի ուրախության եւ պակաս տրտմության ժամերին, ծերության օրերին՝ որպես կարոտ անցած ու անվերադարձ, հուշ դարձած կյանքի, եւ երբ մարդուն ուղեւորում են հավերժություն...

Կյանքը սկսվում է երգով եւ ավարտվում է երգով:

Օրհնյալ է երգը:

ՋԱՎԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Դիրիժոր

Ռոման Ամոյանն առաջին մեդալը պարգեւեց Հայաստանին

Ավելի քան 100 երկրների 1500 ըմբիշներ են ժամանել Մոսկվա, որտեղ մեկնարկել է ըմբշամարտի աշխարհի հերթական առաջնությունը: Մրցաշարը սկսվեց հունահռոմեական ոճի ըմբիշների մրցավեճով: Մրցումների առաջին օրն իրենց հարաբերությունները պարզեցին մինչեւ 55, 66 եւ 96 կգ քաշային ըմբիշները: Մրցագորգ դուրս եկած հայաստանցի 3 ըմբիշներից առավել հաջող ելույթ ունեցավ Ռոման Ամոյանը՝ արժանանալով բրոնզե մեդալի:


ՏՈՏՈՒՐ

Հայ ըմբիշն առաջին երեք գոտեմարտերում ոչ մի միավոր չզիջեց մրցակիցներին՝ հաջորդաբար առավելության հասնելով եգիպտացի Մուսաֆա Հասան Աբդելալի (7-0), ճապոնացի Կոհեյ Հասեգամայի (10-0) եւ կուբացի Գուսավո Բալարս Մարինի նկատմամբ (4-0): Կիսաեզրափակիչում Ամոյանի մրցակիցն իրանցի անվանի ըմբիշ, աշխարհի քառակի եւ Ասիայի եռակի չեմպիոն Համիդ Մոհամադ Սորիան էր: Մրցակիցները միմյանց քաջ ծանոթ էին: Անցյալ տարի Հեռնինգում անցկացված աշխարհի առաջնությունում նրանք գոտեմարտել էին եզրափակիչում: Հաղթել էր իրանցի մարզիկը: Այս անգամ էլ հաջողությունն ուղեկցեց իրանցի ըմբիշին, որն առավելության հասնելով 3-0 հաշվով, մսավ եզրափակիչ: Վճռորոշ գոտեմարտում Սուրիան 5-0 հաշվով պարտության մատնեց կորեացի Կյու Ջին Ջոյուին եւ 5-րդ անգամ հռչակվեց աշխարհի չեմպիոն:

Իսկ Ռոման Ամոյանը սիրելված էր բրոնզե մեդալի համար գոտեմարտել բուլղարացի Վենելին Վենկովի հետ: Հայ ըմբիշի առավելությունը բացահայտ էր (27-0): Այսպիսով, աշխարհի առաջնությունում Ռոման Ամոյանն առաջին մեդալը պարգեւեց Հայաստանի հավաքականին: Ռոմանը մեր բազմափորձ ըմբիշներից է: Նա Պեկինի օլիմպիական խաղերի բրոնզե մրցանակակիր է, 2006-ին Մոսկվայում հռչակվել է Եվրոպայի չեմպիոն, 3 անգամ էլ Եվրոպայի առաջնություններում 2-րդ մրցանակակիր է դարձել: Աշխարհի առաջնություններում Ռոմանը 2-րդ մեդալը նվաճեց՝ արծաթին ավելացնելով բրոնզե պարգեւը: Ամոյանը 2001-ին հռչակվել է երիտասարդների աշխարհի չեմպիոն, իսկ հաջորդ տարի հաջողությունը կրկնել է Սուբոտիցայում անցկացված Եվրոպայի երիտասարդական առաջնությունում:

Մինչեւ 66 կգ քաշայինների մրցաշարում Հայաստանի պատվիրակ Արման Ադիկյանն անհաջող հանդես եկավ: Առաջին գոտեմարտում հաղթելով վրացի ըմբիշ Մանուչար Ջխադային (6-3), Արմանը 2-րդ մրցամարտում 4-6 հաշվով զիջեց ադրբեջանցի Վիսալի Ռահիմովին ու դուրս մնաց հետագա պայքարից: Իսկ Ռահիմովը դարձավ բրոնզե մեդալակիր:

Այնուամենայնիվ, քաշային այս կարգում էլ հայ ըմբիշն արժանացավ մեդալի: Խոսքն Ուկրաինան ներկայացնող Արմեն Վարդանյանի մասին է: Նա միեւնույն 2-1 հաշվով առավելության հասավ ֆրանսիացի Ֆաբիեն Գուենոտի եւ սերբ Ալեքսանդր Մախմիտովիչի նկատմամբ, ապա պարտության մատնեց ԱՄՆ-ը ներկայացնող Ֆարուկ Սահինին (3-0) եւ թուրք Վասիֆ Արզիմանովին (2-1): Աշխարհի չեմպիոնի կոչման համար գոտեմարտում Արմենի մրցակիցը Եվրոպայի կրկնակի չեմպիոն, ռուսաստանցի Ամբակո Վաչաձեն էր: Գոտեմարտն ավարտվեց վրացի ըմբիշի հաղթանակով (3-0):

28-ամյա Արմենը եւս տիտղոսակիր ըմբիշ է: Նա Պեկինի օլիմպիադայի բրոնզե մրցանակակիր է, Եվրոպայի կրկնակի չեմպիոն, աշխարհի երիտասարդների չեմպիոն: Վարդանյանն աշխարհի առաջնություններում 2-րդ անգամ դարձավ աշխարհի փոխչեմպիոն: Առաջին անգամ նա նման հաջողության էր հասել 2003-ին:

Մինչեւ 66 կգ քաշային կարգում հանդես եկավ եւս մեկ հայ ըմբիշ՝ Շվեդիան ներկայացնող Շարուր Վարդանյանը: Նա անհաջողության մատնվեց առաջին իսկ գոտեմարտում՝ զիջելով Ջուլիան Պանահիին (0-6):

Անհաջող էր նաեւ մինչեւ 96 կգ քաշայինների մրցավեճին մասնակցած Սարգիս Տոնոյանի ելույթը: Նա պարտվեց ուկրաինացի Օլեգ Կրյոկային (6-7) ու դուրս մնաց հետագա պայքարից: Չեմպիոնի տիտղոսին արժանացավ իրանցի Ամիր Ալիկբարին, որը եզրափակիչում հաղթեց բելառուսցի Տիմոֆեյ Ջինիչենկոյին:

Կլիչկոն Պիտերին տրք նվիրեց

Սեպտեմբերի 11-ին Ֆրանկֆուրտում IBF-ի եւ WBO-ի վարկածներով գերծանրքաշային կարգի աշխարհի ներկայիս չեմպիոն Վլադիմիր Կլիչկոն իր տիտղոսների պաշտպանության համար կմենամարտի WBC-ի վարկածով աշխարհի նախկին չեմպիոն Սեմուել Պիտերի հետ: Մենամարտից առաջ Ֆրանկֆուրտում կայացավ մրցակիցների եզրափակիչ մամուլի ասուլիսը, որը համընկավ Պիտերի ծննդյան 30-ամյակի հետ: Այդ առիթով Կլիչկոն նիգերիացի բռնցքամարտիկին ռինգի տեսով յուրօրինակ տրք նվիրեց, որից հետո սկսեց իր խոսքը. «Ցանկանում եմ Պիտերին շնորհավորել ծննդյան օրվա առթիվ: 30 տարեկանը հիանալի տարիք է: Լավ եմ հիշում իմ 30-ամյակը: Այն ժամանակ կարիերայում որոշակի բարձունքի էի հասել, իսկ հետագայում տարեցտարի իմ նվաճումներն ավելի ծանրակշիռ դարձան: Շատ ուրախ եմ մրցել մի մրցաշարեզում, որտեղ 45 տարի առաջ մենամարտել է լեգենդար Մոհամեդ Ալին: Արդեն սովորել եմ այն փաստին, որ մրցակիցներիցս շատերը խոսանում են ինձ նոկաուտի ենթարկել առաջին ռաունդներում: Սեմ, այսօր քո համար առանձնահատուկ օր է: Քո մենեջերը հայտարարել է, որ իմ գոտիները քեզ նվեր են դառնալու ծննդյան օրվա առթիվ: Սակայն ես էլ կարող եմ քեզ նվեր տալ հենց հիմա: Դու կարող ես շոշափել գոտիներս, նույնիսկ լուսանկարվել դրանց հետ»:

«Շատ ուրախ եմ կրկին Գերմանիայում գտնվել: Շնորհակալ եմ ռեւանշի հնարավորություն ստանալու համար: Դա կլինի դասական, հիանալի մենամարտ: Շատ չեմ խոսի: Պատասխանը կտամ շաբաթ օրը: Ասված հավատում է ինձ, ես՝ նրան: Հավատս չեմ կորցրել նույնիսկ Կլիչկո եղբայրներին պարտվելուց հետո: Սեպտեմբերի 11-ին կրկին կնվաճեմ աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Այդ մենամարտին սպասել եմ 2005-ից: Սեպտեմբերն իմ ամիսն է: 30 տարեկան եմ, գտնվում եմ կարիերայիս գագաթնակետին, շատ լավ եմ նախապատրաստվել մենամարտին», հայտարարել է Սեմուել Պիտերը:

Մազերն ապահովագրեցին 1 մլն դոլարով

Շամպուն արտադրող հանրահայտ Head and Shoulders ֆիրման 1 մլն դոլարով ապահովագրել է ԱՄՆ-ի ազգային ֆուտբոլային լիգայի (NFL) «Պիտսբուրգի Սթիլերզ» թիմի խաղացող Տրոյ Պոլոմալուի մազերը: Վերջինս, որ հանրահայտ է իր սեւ, երկար մազերով, զբաղվում է ֆիրմայի արտադրանքի գովազդմամբ:

Ապահովագրական պայմանագիրը կնքվել է Լոնդոնում: Ըստ Պոլոմալուի, երկար մազերն իր ծնողների նկատմամբ հարգանքի արտահայտություն է: Նրա ծնողներն արմատներով Սամոայից են: Բնականաբար, ամերիկյան ֆուտբոլի հանդիպումների ժամանակ մրցակիցները հաճախ են բռնում Պոլոմալուի մազերից, ուստի դրանց ապահովագրումը ֆինանսական առումով շահավետ է Տրոյի համար:

Բուֆոնին առաջարկ կարվի

Անգլիական «Մանչեսթր Յունայթեդը» փոխարինող է փնտրում թիմի փորձառու դարպասապահ Էդվին վան դեր Սարին, որի 40-ամյակը կլրանա հոկտեմբերին: Ակումբում պատրաստվում են առաջարկ կատարել Իտալիայի հավաքականի եւ Թուրինի «Յուվենտուսի» դարպասապահ Ջանլուիջի Բուֆոնին ու որպես փոխհատուցում վճարել 18 մլն եվրո:

Հարկ է նշել, որ այս ամռանը Բուֆոնը մերժել էր «Մանչեսթր Սիթիի» առաջարկը: Նրա վաճառքը հնարավոր է միայն այն դեպքում, եթե «Յուվենտուսի» գլխավոր մարզիչ Լուիջի Դել Ներիին հաջողվի կարգավորել թիմի խաղը պաշտպանությունում:

ՇԱԽՄԱՏ

Ուղեգրի համար պայքարը սրվեց

Շանհայում ավարտին է մոտենում շախմատի միջազգային մրցաշարը: Նախավերջին՝ 5-րդ տուրում Լեւոն Արոնյանը սպիտակներով խաղում էր Վլադիմիր Կրամնիկի հետ: Ժամկետից շուտ Բիլբաոյի մրցաշարի ուղեգիր նվաճելու համար Արոնյանին բավարարում էր նույնիսկ ոչ-ոքին: Իսկ ահա Կրամնիկին միայն հաղթանակ էր անհրաժեշտ: Եվ ռուսաստանցի գրոսմայստերը հասավ նպատակին: 71-րդ քայլին Արոնյանը հանձնվեց՝ կրելով անդրանիկ պարտությունը: Կրամնիկի համար դա առաջին հաղթանակն էր: Նա վաստակեց 6 միավոր եւ հավասարվեց Արոնյանին:

Իսկ ահա Ալեքսեյ Շիրովը մրցաշարի ավարտից մեկ տուր առաջ նվաճեց Բիլբաոյի ուղեգիրը: Նա սեւերով 60-րդ քայլին պարտության մատնեց Վան Հաոյին: Շիրովը վաստակեց 11 միավոր: Հաոն ունի ընդամենը 2 միավոր:

Ավարտական տուրում Արոնյանը սեւերով կխաղա Շիրովի հետ, իսկ ահա Կրամնիկը սպիտակներով կմրցի Հաոյի հետ:

Առայժմ միջին դիրքերում

Ցյուրիխում մեկնարկած համալսարանական շախմատիստների աշխարհի 11-րդ առաջնության 57 մասնակիցների թվում է բրազիլահայ Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը: Ըստ մրցումների պաշտոնական կայքի, հայ շախմատիստը 3 տուրից հետո 1,5 միավորով 34-րդ տեղում է: Նա իր վարկանիշով (2550) մասնակիցների շարքում 6-րդն է: Ամենաբարձր վարկանիշն (2732) ունի չինացի Յու Վանը:

Մխիթարյանը մրցաշարը սկսեց Իսրայելը ներկայացնող Միխայիլ Բոսվիննիկի հետ ոչ-ոքիով, ապա հաղթեց շվեյցարացի Ջուլիեն Կարոնին: 3-րդ տուրում նա առաջին պարտությունը կրեց մոնղոլ Բայարսաիխան Գունդավայից: 3 տուրից հետո 100 տոկոսանոց արդյունքով առաջատարներն են Իսրայելը ներկայացնող Իլյա Խմելնիկերը եւ չինացի Յու Վանը: 6 շախմատիստներ վաստակել են 2,5-ական միավոր:

Հաղթական ավարտ

Ֆուտբոլի Եվրոպայի երիտասարդական առաջնության ընտրական մրցաշարի ավարտական խաղում Հայաստանի երիտասարդական հավաքականը երեկ Թբիլիսիում 2-0 հաշվով հաղթեց Վրաստանի իր հասակակիցներին: Խաղավերջում գոլերի հեղինակներ դարձան Արտակ Դաշյանն ու Վալտեր Պողոսյանը: Այսպիսով, ՀՀ հավաքականը 13 միավորով մրցաշարն ավարտեց 4-րդ տեղում: Իսկ ահա Թուրքիայի հավաքականը սեփական հարկի տակ 1-0 հաշվով պարտության մատնեց իռլանդացիներին:

Եվս երկու մասնակից

Թուրքիայում ընթացող բասկետբոլի տղամարդկանց աշխարհի առաջնությունում հայտնի դարձան քառորդ եզրափակիչի եւս երկու մասնակիցներ: ԱՄՆ-ի բասկետբոլիստները մեծ առավելությամբ հաղթեցին Անգոլայի հավաքականին (121-66), իսկ ռուսները պարտության մատնեցին Նոր Զելանդիայի ընտրանուն (78-56): Քառորդ եզրափակիչում ռուսներն ու ամերիկացիները կմրցեն միմյանց հետ: Զույգեր են կազմել նաեւ Սերբիան ու Իսպանիան, Թուրքիան ու Սլովենիան:

Մարադոնան հոբելյանը կնշի խաղադաշտում

Դիեգո Մարադոնան ցանկանում է 50-ամյակը նշել հաջորդ ամիս կազմակերպվելիք բարեգործական խաղով: Հանդիպմանը կմասնակցեն «Նապոլիում» 1987-ին եւ 1990-ին Իտալիայի չեմպիոն հռչակված ֆուտբոլիստները, որոնց թվում կլինի նաեւ Մարադոնան:

«Ցանկանում եմ այդ տարիներին թիմում հանդես եկած ֆուտբոլիստներին կրկին միասին տեսնել խաղադաշտում: «Նապոլիում» անցկացրած այդ տարիները լավագույնն էին իմ կյանքում», նշել է Մարադոնան: Հանդիպմանը մասնակցելու իրենց համաձայնությունն արդեն տվել են իտալացի Ջորդանոն եւ բրազիլացի Կարեկան, որոնք «Նապոլիում» Մարադոնայի հետ հարձակողական եռյակ էին կազմում:

Առայժմ ակումբը պաշտոնապես չի հայտարարել խաղի մասին, սակայն նախագահ Աուրելիո դե Լորենտիսը հունիսին հայտարարել էր, որ սպասում է Դիեգոյին:

Ռմբարկու դարպասապահի 90-րդ գոլը

Բրազիլական «Սան Պաուլու» թիմի հանրահայտ դարպասապահ Ռոժերիո Սենին շարունակում է բոլորին զարմացնել իր ռմբարկուի հատկանիշներով: Նա վաղուց իր թիմի տուգանային եւ 11 մ հարվածների իրացնողն է: «Մարականա» մարզադաշտում Բրազիլիայի առաջատար «Ֆլումինենսեի» հետ մրցախաղում Սենին ֆուտբոլային իր կարիերայում 90-րդ գոլը խփեց: 33-րդ րոպեին նա հստակ իրացրեց տուգանային հարվածը եւ հավասարեցրեց հաշիվը, որը բացել էր պորտուգալացի Դեկուն: Բացի գոլից, 37-ամյա դարպասապահը նաեւ հետ մղեց «Ֆլումինենսեի» հարձակվող Վաշինգտոնի 11 մ հարվածը: Սենիի շնորհիվ խաղն ավարտվեց ոչ-ոքի (2-2):

Նշենք, որ ՖԻՖԱ-ն Ռոժերիո Սենիին պաշտոնապես ճանաչել է դարպասապահների միջեւ լավագույն ռմբարկու:

«Մարականայում» կտեղադրվի Պելեի արձանը

Բրազիլիայի կառավարությունը մտադիր է հանրահայտ «Մարականա» մարզադաշտում տեղադրել ֆուտբոլի արքա Պելեի արձանը: Այս մասին տեղեկացրել է բրազիլական «Օ Գլոբոն»:

«Մարականա» մարզադաշտը պատահականորեն չի ընտրվել: Այստեղ է իր հրաժեշտի խաղն անցկացրել Պելեն: Նա աշխարհի միակ ֆուտբոլիստն է, որը երեք անգամ նվաճել է աշխարհի գավաթը: Բրազիլիայի հավաքականի կազմում Պելեն աշխարհի չեմպիոն է հռչակվել 1958-ին, 1962-ին եւ 1970-ին: «Սանթոսի» կազմում նա բազմիցս դարձել է Բրազիլիայի չեմպիոն եւ գավաթակիր, նվաճել է Լիբերտադորեսի եւ Միջմայրցամաքային գավաթները:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Բացահայտումներ Քարահունջում

Հայաստանը՝ հնագույն աստղագիտական կենտրոն

Հայ-բրիտանական «Քարեր եւ աստղեր» ծրագրի հայաստանյան արշավախմբի գլխավոր գիտական խորհրդական **Վաչագան Վահրադյանն** արդեն երկար ժամանակ հետազոտում է Քարահունջը: Հետազոտություններով բացահայտվել են հուշարձանի եւ Կարաոի համաստեղության կապը, հուշարձանի աստղագիտական նշանակության վարկածն ու կապը անգլիական Սթոունհենջի հետ: Սրանք ու էլի մի շարք փաստեր Վահրադյանն ուղարկել է Օքսֆորդի համալսարան. պատասխանը չի ուշացել. փաստերը հետաքրքրական են, համագործակցությունը՝ անհրաժեշտություն:

Վերջին շրջանում գրեթե ամեն շաբաթ Վահրադյանը նոր բացահայտումներ է արել. Նա համոզված է, որ հայկական Քարահունջն ավելի հին ծագում ունի, քան Սթոունհենջը:

Հնագետները Քարահունջին վերագրում են 3800-ամյա պատմություն, հենվելով այնտեղ հայտնաբերված իրերի վրա, մինչդեռ Վահրադյանի մաթեմատիկական եւ աստղագիտական հաշվարկների հիման վրա Քարահունջն ունի շուրջ 7000-ամյա պատմություն:

Զուգահեռներ անցկացնելով Քարահունջի եւ Սթոունհենջի միջեւ, Վահրադյանը շեշտում է երկու կառույցների նմանությունը: Հայկական եւ բրիտանական կառույցներում հսկայ ուղվածքվում են դեպի հյուսիս-արեւելք ուղղված քարե միջանցքները, որոնք հնարավորություն են տալիս պարզելու ամառային արեւադարձի օրը: Նրա ներկայացմամբ, սա փաստում է, որ երկու կառույցների հեղինակներն էլ միեւնույն մշակութային արժեքների կրողն են եւ լավ տիրապետել են աստղագիտությանը:

Վահրադյանը մեջբերում է Տրոյան հայտնաբերած Հենրիխ Շլիմանի խոսքերը. «Եվրոպայի ողբերգությունն է, որ իր քաղաքակրթության հիմք ընդունեց ոչ թե հայկական, այլ հին հունական մշակույթը»: Շլիմանը ոչ միայն հավասարեցնում էր երկու մշակույթներ, այլեւ նախապատվությունը տալիս էր հայկականին: Հայկական մշակույթի եւ հին շրջանում քաղաքակրթության առաջնորդողի լավագույն օրինակներից մեկն էլ Արեւմտյան Հայաստանի Պորտասար վանական համալիրն է: Համադրելով երեք կառույցների լուսանկարները, քարերի ձեւն ու համաստեղությունները, Վահադյանը փաստում է, որ հուշարձանները կարծես միմյանց շարունակությունը լինեն: Երեք կառույցների քարերի վրա պատկերված է համաստեղությունների բաժանված աստղային երկինքը՝ Անգղի (Կարաոի) համաստեղության շուրջը: Հնագետ Կարլ Շմիդտը կառույցին վերագրում է 12.000 տարվա պատմություն, ինչը փաստում է, որ Հայկական լեռնաշխարհում Աստղային երկինքը համաստեղությունների էր բաժանված 12.000 տարի առաջ:

Այսօր թուրքերը հայկական Պորտասար վանական համալիրն անվանում են Turkish Stonehenge եւ ներկայացնում որպես թուրքական աստղագիտության ժառանգություն: Թուրքական խեղաթյուրման դեմ գիտնականները ոչինչ չեն ձեռնարկում:

Մյուս շաբաթ Հայաստան կժամանի Օքսֆորդի համալսարանի պատվիրակությունը՝ աշխարհագրագետ, հոգեբան, մաթեմատիկոս, աստղաբաններ: Պեղումները կտեւեն շուրջ 2 շաբաթ:

Մինչ գիտնականը փորձում է աշխարհին մատուցել Քարահունջի հսկայական արժեքը, այնտեղ մարդիկ ոչխար են արածացնում: Թեպետ կառույցն ընդգրկված է հուշարձանների պահպանման ցանկում, սակայն ոչ միայն անվանգությունը, այլեւ պահակի ներկայությունն ապահովված չէ: Անտարբերության պարագայում հուշարձանի 35-րդ քարը վերջերս գողացել են:

ՀԱՄՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նորատուսի միջնադարյան գերեզմանատունը ամենամեծն է աշխարհում

Երեկ Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղ էին եկել նաեւ հարեւան համայնքների բնակիչները, որոնք դիմավորեցին ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Մարի Յովանովիչին, «Վիվասել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանին, Գյումրիում Իսալիայի պատվավոր հյուպատոս Անտոնիո Մոնտանտային, պատվավոր հյուրերին եւ ԱՄՆ-ից ժամանակ դեսպանի մորը:

Նորատուս (կամ՝ Նորադուզ) գյուղը հիմնվել է 1829 թ., սակայն բրոնզե դարի գտածոների ու միջնադարյան կառույցների առկայությունը փաստում է, որ հինավուրց պատմություն ունեցող մի բնակավայր է, որի տարածքը զբաղեցնում է շուրջ 800 խաչքար՝ փորագրված 9-17-րդ դարերում, եւ համարվում է աշխարհում ամենամեծ գերեզմանադաշտ-խաչքարի բացօթյա թանգարան, իհարկե, Զուղայի (Նախիջեւան) պատմական գերեզմանատնից հետո: Եվ ահա մշակութային արժեքների պահպանության ԱՄՆ դեսպանի հիմնադրամի միջոցներով, հայկական հուշարձանների ճանաչման ծրագրի (AMAP) նախաձեռնությամբ 2,5 միլիոն ԱՄՆ դոլար է հատկացվել Նորատուսի գերեզմանզատան վերանորոգման, կանաչապատման, մոտ 900 մետր ցանկապատման, ճանապարհի բարեկարգման աշխատանքներին: Մեկ տարի տեւած աշխատանքների ավարտի եւ հանդիսավոր բացման արարողությունը կատարվեց խաչքարերի դամբարանադաշտի մուտքի մոտ, որի ընթացքում ելույթներ ունեցան դեսպան Յովանովիչը, Ռալֆ Յիրիկյանը (գլխ. հովանավոր), Գեղարքունիքի մարզպետ Նվեր Պողոսյանը, գյուղապետ Մուրադ Հարությունյանը եւ ուրիշներ: Ծրագրին իրենց մասնակցությունն են բերել մի շարք դոնոր կազմակերպություններ, որոնք էլ մասնակցում էին տոնական միջոցառմանը: Համայնքը ծրագրին հատկացրել է 1 միլիոն դոլար ու դեռ շարունակում է բարեկարգել գյուղի ճանապարհը:

Ծրագրի մասնակիցները կարեւորեցին պատմական հնավայրի պահպանությունն ու այն սերունդներին փոխանցելու գաղափարը եւ խոստացան, որ դրանով չի սահմանափակվի համագործակցությունը: Ջերմ ու շնորհակալական խոսք հղեց Գեղարքունիքի թեմի առաջնորդ Մարկոս եպս. Հովհաննիսյանը, նշելով, որ 7000 բնակչություն ունեցող Նորատուսի բնակչության հոգատարության շնորհիվ է, որ մեզ է հասել իր տեսակով ու չափերով աշխարհում եզակի կանգուն խաչքարերի դամբարանադաշտը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ
Նորատուս

ՕՊԱՆՈՒՅՈՒՄ

Վերաֆինանսավորման տոկոսադրույքն անփոփոխ՝ 7.25 տոկոս

2010 թ. սեպտեմբերի 7-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց անփոփոխ թողնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 7.25%:

2010 թ. օգոստոսին նախորդ ամսվա նկատմամբ արձանագրվել է 1.3% գնած, որի պարագայում 12-ամսյա ցուցանիշն աճել է նախորդ ամսվա նույն ցուցանիշի նկատմամբ 1.8 տոկոսային կետով՝ կազմելով 9.6%:

Խորհուրդը փաստեց, որ 12-ամսյա գնաճի արագացումը հիմնականում արդյունք է պարենային ապրանքների միջազգային շուկաների եւ գյուղատնտեսության ոլորտի զարգացումներով պայմանավորված՝ «Հացամթերք», «Բանջարեղեն եւ կարտոֆիլ» եւ «Միրգ» ապրանքախմբերում գների աճի: Խորհուրդը գնահատում է, որ չնայած գնաճի ցուցանիշը էապես գերազանցում է նպատակային միջակայքի վերին սահմանը, այդուհանդերձ, այն առաջարկի շոկերի արդյունք է, որոնք, քիչ հավանական է, որ կունենան շարունակական բնույթ: Ակնկալվում է, որ հետագա ամիսներին 12-ամսյա գնաճն աստիճանաբար կնվազի՝ կանխատեսվող 1 տարվա հորիզոնում ձեւավորվելով նպատակային միջակայքի վերին սահմանի մոտ:

Միաժամանակ խորհուրդը միակարծիք է, որ ներքին պահանջարկի աստիճանական վերականգնումը դեռեւս գնաճային ճնշումներ չի առաջացնում, ավելին, տարեսկզբից դրամավարկային պայմանների խստացումը եւ արժութային շուկայի ներկա զարգացումները շարունակում են նպաստել գնաճային միջավայրի մեղմմանը:

Հաշվի առնելով բացառապես առաջարկի գործոններով գնաճի արագացման փաստը, ինչպես նաեւ պարենային ապրանքների միջազգային շուկաների ապագա զարգացումների անորոշությունները, խորհուրդը նպատակահարմար գտավ շարունակել ձեռնպահ մնալ դրամավարկային պայմանների խստացումից:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

Ի լրումն ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված հայտարարությունների տեղեկացնում ենք, որ՝

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից համակարգչային տեխնիկա, հարակից, ցանցային եւ ցուցադրման սարքավորումներ ձեռք բերելու նպատակով հայտարարված բաց մրցույթին մասնակցելու համար ներկայացված հայտերի բացման օրը ս.թ. սեպտեմբերի 13-ից տեղափոխվել է ս.թ. սեպտեմբերի 14-ը, իսկ մրցույթի ամփոփման օրը ս.թ. սեպտեմբերի 16-ից տեղափոխվել է ս.թ. սեպտեմբերի 18-ը:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու համար կրակմարիչներ ձեռքբերելու նպատակով կազմակերպության ընտրության բաց մրցույթին մասնակցելու համար ներկայացված հայտերի բացման օրը ս.թ. սեպտեմբերի 13-ից տեղափոխվել է ս.թ. սեպտեմբերի 14-ը, իսկ մրցույթի ամփոփման օրը ս.թ. սեպտեմբերի 16-ից տեղափոխվել է ս.թ. սեպտեմբերի 18-ը:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

Ռիելտոր <<Ֆլորես>> Աճուրդի Տուն ՍՊԸ-ն <<ԱԴԱՄԱՆԴ>> ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում իրականացնելու է <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ -ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

-Հասարակական սննդի օբյեկտ: Ընդհանուր մակերեսը 181 քմ եւ հողամաս 106 քմ: Հասցե: ՀՀ, ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա համ., Անդրանիկի 56/6:

-Խանութ: Ընդհանուր մակերեսը 92.4 քմ եւ հողամաս 101 քմ : Հասցե: ՀՀ, ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա համ., Անդրանիկի 56/5: Համալիրի մեկն. գինը՝ 100000000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 11.10.2010թ-ից մինչեւ 30.12.2010թ. յուր. աշխ. օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտերը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեում յուր. օր ժամը 11.00-ից 20.00-ն: Լրացուցիչ տեղեկություններ, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել **www.borsa.am**:

Սարերի գարունը մեկ գավաթի մեջ

ՍԱՐԻ ԹԵՅ

ՈՒՐՑԻ ԵՎ ԴԱՂՁԻ ԸՆՏԻՐ ԹԵՅ

MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ

25 փաթեթ մեկ տուփի մեջ
և ընդամենը 1-2 ռոպեից կարող եք
վայելել ընտիր որակի ուրցի թեյ

առնվազն ամիսը մեկ արժե ընտրել բարձրորակը

Մեծածախ գնումների համար զանգահարել 47-27-20, 47-03-63

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Գեղափ համայնքի վարչական տարածքում **«Մինա-Մայա» ՍՊԸ-ի** կողմից «Էլեգիս» գետի վրա նախատեսվող «Եղեգնաձոր» ՓՀԷԿ-1-ի կառուցման եւ նույնանուն գետից ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձիք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. սեպտեմբերի 13-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ բնապահպանության նախարարություն

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 7.09.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: